ԱՅՐՎԱԾ, ԾԵԾՎԱԾ ՈՒ Խաբված

ոստիկանական բռնության համար պատասխանատվության սպասելիս

ՕԳՈՍՏՈՍ 2016

CIVIC SOLIDARITY

IPHR International Partnership for Human Rights

HELSINKI CITIZENS ASSEMBLY

PROTECTION OF RIGHTS WITHOUT BORDERS

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՍՀՄՄԱՆՆԵՐԻ

NORWEGIAN HELSINKI COMMITTEE

Մեր սիրելի ընկեր Միքայել Դանիելյանի թանկ հիշատակին



Բովանդակությունը

Ներածություն 4

Մեթոդոլոգիան 5

Իրադարձությունների նկարագրությունը 6

Հիմնական խնդիրները 8

- ՀՀ իրավապահ մարմինների կողմից հավաքների ազատության իրավունքի խոչընդոտումն ու անհամաչափ ուժի կիրառումը 8
- Բերման ենթարկելն ու բերման ենթարկված անձանց նկատմամբ ոտնձգությունները 12
- Պատասխանատվությունը՝ 2016թ հուլիսի 17-30-ը տեղի ունեցած ցույցերի ընթացքում տեղ գտած իրավախախտումների համար 17
- Լրագրողների իրավունքները 18

Իրավական գնահատական 20

Առաջարկություններ 26

© Նարեկ Ալեքսանյան

Ներածություն

Այս զեկույցն ամփոփում է տվյալները, որոնք ձեռք է բերել Միջազգային գործընկերություն հանուն մարդու իրավունքների (ՄԳՄԻ, IPHR) կազմակերպության նախաձեռնած դիտորդական առաքելությունը 2016 հուլիսի 28-ից օգոստոսի 1-ը Երևանում կատարած փաստահավաք աշխատանքի արդյունքում: Առաքելությունը կազմակերպվել էր «Քաղաքացիական համերաշխության պլատֆորմի» (ՔՀՊ) շրջանակներում: ՔՀՊ փաստահավաք խմբի անդամներն ուսումնասիրել են հաղորդումները՝ գերազանցապես խաղաղ ցուցարարների նկատմամբ անհամաչափ ուժի կիրառման, կամայական ձերբակալությունների, ցուցարարների և լրագրողների նկատմամբ բռնությունների և այլ իրավախախտումների մասին, որոնք տեղի են ունեցել Երևանում՝ 2016թ հուլիսի 17-30-ը կայացած ցույցերի ընթացքում: Փաստահավաք խումբն արձանագրել է 42 տուժածի և ականատեսի վկայություն: ՄԳՄԻ և ՔՀՊ փաստահավաք խմբի անդամները չեն ներկայացնում որևէ դիրքորոշում՝ ցուցարարների պահանջների կամ ընդդիմադիր խմբերի կողմից իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար կիրառած միջոցների առնչությամբ: Այս զեկույցի միակ նպատակն է վերլուծել ցույցերի հետ կապված իրավախախտումների առկայությունը և հայտնաբերված խախտումների բնույթը:

Երևանում բողոքի ցույցեր սկսվեցին, երբ 2016թ հուլիսի 17-ին «Սասնա ծռեր» կոչվող զինված խումբը գրավեց Երևանի Էրեբունի թաղամասում տեղակայված՝ ՀՀ ոստիկանության պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գունդը, որի ընթացքում սպանվել է ոստիկանության գնդապետ Արթուր Վանոյանը, վիրավորվել և պատանդ են վերցվել այլ ոստիկաններ[1]: Խումբը պահանջում էր բանտից ազատ արձակել «Հիմնադիր խորհրդարանի»[2] առաջնորդ Ժիրայր Սեֆիլյանին, Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականը: Վերջին տարիներին «Սասնա ծռերի» անդամները, ովքեր հարում են «Հիմնադիր խորհրդարան» քաղաքական շարժմանը և որոնց մի մասը ղարաբաղյան հակամարտության վետերաններ են, շարունակաբար հայտարարել են, որ Հայաստանում ընտրական գործընթացները խորապես նենգափոխված են՝ այդպիսով վիճարկելով իշխանությունում գտնվողների լեգիտիմությունը: Նրանք մեղադրել են նաև քաղաքական վերնախավին՝ լայնածավալ կոռուպցիայի մաս կազմելու համար:

Այն բանից հետո, երբ զինյալները գրավեցին Ոստիկանության պարեկապահակային ծառայության զորամասը, ցուցարարները սկսեցին հավաքվել Երևանի կենտրոնում՝ Ազատության հրապարակում՝ գրավված ոստիկանական գնդի մերձակայքում՝ համերաշխություն ցուցաբերելու զինյալներին: Նրանք միասնական շարժում չէին ներկայացնում նրանց առաջնորդում էին տարբեր քաղաքական և քաղաքացիական խմբեր ու անհատներ, ինչպես օրինակ՝ «Ժառանգություն» կուսակցության անդամները, «Հիմնադիր խորհրդարան» շարժումը, ինչպես նաեւ քաղաքացիական առաջնորդներ, ովքեր հայտնի էին դարձել նախորդ տարվա «Էլեկտրիկ Երևան» շարժումից: Թեև ոստիկանությունը չէր ցրում հավաքները, սակայն, բերման էր ենթարկում տասնյակ ցուցարարների: Չնայած դրան, հետագա օրերին ցուցարարների թիվը գնալով աճում էր:

Հուլիսի 20-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը հետաքննություն է սկսել ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման մասին հաղորդումների կապակցությամբ: Զեկույցը գրելու պահին, կարգապահական տույժեր են կիրառվել Երևան քաղաքի ոստիկանության պետի և ոստիկանական երկու բաժանմունքի ղեկավարների նկատմամբ: Նկատի ունենալով, որ հայաստանյան իշխանությունները չեն ապահովել 2015թ հունիսի «Էլեկտրիկ Երևան» ցույցերի[3],դեմ անհամաչափ ուժի կիրառման պատասխանատուների նկատմամբ արդարադատության կայացումը, ՔՀՊ պատվիրակությունը խորապես մտահոգ է, որ վերջին ցույցերի ընթացքում անհամաչափ ուժի կիրառման պատասխանատուները նույնպես կխուսափեն արդարադատությունից: Հիմքեր կան եզրակացնելու, որ ոստիկանները հատուկ թիրախավորել են հուլիսյան բացառապես խաղաղ ցույցերի հիմնական առաջնորդներին, ձերբակալել են և մեղադրանք ներկայացրել «զանգվածային անկարգություններ կազմակերպելու» համար, որպեսզի թուլացնեն ցույցերը, որ ի վերջո մարեն դրանք:

1 Օգոստոսի 13-ին հիվանդանոցում մահացավ եւս մեկ ոստիկան: Հուլիսի 30-ին եւս մի ոստիկան սպանվեց կրակոցից

2 «Հիմնադիր խորհրդարանը» քաղաքացիական շարժում է, որը քննադատում է կառավարությանը՝ կոռումպացված լինելու համար: Շարժումը չի մտնում քաղաքական համակարգի մեջ եւ չի մասնակցում ընտրություններին:

3 ՄԳՄԻ զեկույցը՝ «#ElectricYerevan խաղաղ ցույցի ցրումը Երեւանում» *http://iphronline.org/armenia-electricyerevan-crackdown-on-peaceful-protest-20150714.html*

Մեթոդաբանությունը

Քաղաքացիական համերաշխության պլատֆորմի (ՔՀՊ) շրջանակներում Միջազգային գործընկերություն հանուն մարդու իրավունքների (ՄԳՄԻ) կազմակերպության նախաձեռնած չորս հոգանոց խումբը փաստահավաք առաքելություն է իրականացրել Երևանում՝ 2016թ հուլիսի 28-ից օգոստոսի 1-ը: Առաքելության նպատակն էր ուսումնասիրել հաղորդումները՝ անհամաչափ ուժի կիրառման, կամայական ազատազրկման, ցուցարարների և լրագրողների նկատմամբ թիրախավորված վերաբերմունքի և այլ իրավախախտումների մասին, որոնք վերաբերում էին Երևանում 2016թ հուլիսի 17-30-ը տեղի ունեցած բողոքի ցույցերին: Հուլիսի 30-ից հետո, երբ ՊՊԾ գունդը գրաված զինված խումբը հանձնվեց, ցույցերն աստիճանաբար նվազեցին և նոր իրավախախտումների մասին հաղորդումներ չեղան:

Խումբը հարցազրույց է վարել և գրանցել է իրադարձությունների անմիջական ազդեցությանը ենթարկված տուժածների, ականատեսների, փաստաբանների, լրագրողների և հասարակական կազմակերպությունների ղեկավարների վկայություններ: Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր համաձայնեցին հանդիպել ՔՀՊ-ի փաստահավաք խմբի հետ և պատմել իրենց դիտարկումների, փորձառության, վերլուծությունների մասին, տրամադրել լուսանկարներ և տեսագրություններ: Որոշ մարդիկ մեզ հետ խոսել են կոնֆիդենցիալության սկզբունքով, հետևաբար զեկույցում չենք գործածել նրանց իրական անունները՝ անվտանգության նկատառումներով:

Այս զեկույցում ներկայացվում են փաստահավաք առաքելության ձեռք բերած տեղեկությունները և իրավական գնահատական է տրվում հուլիսի 17-30-ը տեղի ունեցած իրադարձություններին: ՄԳՄԻ-ն ուսումնասիրել է Երևանում 2016թ հուլիսին տեղի ունեցած բացառապես խաղաղ հավաքների և երթերի մասին տեղեկությունները, այդ թվում՝ տարբեր լրատվամիջոցների տեսագրությունները, որպեսզի կազմի իրադարձությունների ժամանակագրությունը և ստուգի վիրավորների և ոստիկանական բռնության մասին հաղորդումները:

© Narek Aleksanyan

Իրադարձությունների նկարագրությունը

2016թ հուլիսի 17-ին «Սասնա ծռեր» անունով զինված խումբը, որը հարում է «Հիմնադիր խորհրդարան» ընդդիմադիր խմբին, գրավել է Երևանի Էրեբունի թաղամասում տեղակայված ՀՀ ոստիկանության Պարեկապահակային ծառայության (ՊՊԾ) գունդը, որի ընթացքում սպանվել է ոստիկանության գնդապետ Արթուր Վանոյանը, վիրավորվել և պատանդ են վերցվել այլ ոստիկաններ: Այնուհետև խումբը կոչ է արել ժողովրդին՝ դուրս գալ փողոց և պահանջել քաղաքական բանտարկյալների ազատությունը:

Կարճ ժամանակ անց ցուցարարները հավաքվեցին Ազատության հրապարակում և Խորենացի փողոցում՝ «Սասնա ծռերի» կողմից գրավված ՊՊԾ գնդի մոտակայքում: Նրանց հայտարարություններից ու վանկարկումներից երևում էր, որ ուզում են համերաշխություն հայտնել զինված խմբին ու բողոքել կոռուպցիայի և անարդյունավետ կառավարման դեմ:

Հուլիսի 17-ին, 18-ին և 19-ին օրական մոտ 200 ցուցարար էր հավաքվում՝ երաշխիքներ պահանջելով, որ իշխանությունները բռնի ուժ չեն կիրառի ՊՊԾ զորամասը գրաված «Սասնա ծռեր» խմբի անդամների նկատմամբ: Չնայած հավաքները արգելված չէին, այնուամենայնիվ ոստիկանները շատ ցուցարարների էին բերման ենթարկում՝ իրենց խոսքերով՝ անձի ինքնությունը պարզելու համար:

Հուլիսի 17-ին ՀՀ Ազգային անվտանգության ծառայությունը (ԱԱԾ) քրեական գործ հարուցեց ՊՊԾ գնդի գրավման փաստի առնչությամբ: Նույն օրը ոստիկանությունը հայտարարություն հրապարակեց, որում հայտնում էր, որ հուլիսի 17-ից սահմանափակվել է մարդկանց և մեքենաների ազատ տեղաշարժը ՊՊԾ գնդին հարող տարածքում, և քաղաքացիներին հորդորում էր, որ զերծ մնան այդ տարածքում հասարակական միջոցառումներից[4].

Ցուցարարները շարունակում էին հավաքվել Խորենացի փողոցում՝ արգելափակված տարածքից դուրս: Նրանք հայտարարում էին, որ բացի «Սասնա ծռերին» խորհրդանշական աջակցություն ցույց տալուց, ուզում են նաև սնունդ և գոյության այլ միջոցներ հասցնել ՊՊԾ գունդը գրաված մարդկանց:

Խորենացի փողոցում հուլիսի 20-ի ցույցի ժամանակ բռնություն տեղի ունեցավ: Մոտ 500 ցուցարար պահանջում էր թույլ տալ սնունդ և այլ անհրաժեշտ ապրանք հասցնել ՊՊԾ-ն գրաված խմբին՝ ասելով, որ չեն վստահում ոստիկանությանը: Ցուցարարները սկսեցին բարիկադներ կառուցել՝ դրա համար օգտագործելով աղբամաններ և ձեռքի տակ ընկած այլ առարկաներ: Որոշ ցուցարարներ ընդհուպ մոտեցան ՊՊԾ տարածքը պահպանող ոստիկանական շարքին: Ինչ-որ պահի ցուցարարները որոշեցին շարժվել դեպի Տիգրան Մեծ փողոց՝ այն փակելու նպատակով: Այդ պահին ցուցարարների խմբի հետնամասից ոստիկանների ուղղությամբ սկսեցին քարեր նետվել: Տեղի ունեցավ բախում և ցուցարարները ոստիկանների վրայից սկսեցին պոկել սաղավարտներն ու վահանները: Ի պատասխան, ոստիկաններն արցունքաբեր գազ և լուսաձայնային նռնակներ կիրառեցին ցուցարարների նկատմամբ: Լուսաձայնային նռնակները վիրավորում էին նաև խաղաղ ցուցարարներին, ովքեր կանգնած էին բախման վայրից որոշակի հեռավորության վրա: Ի լրումն, ոստիկանները սկսեցին հետապնդել փախչող ցուցարարներին և դաժանորեն ծեծել նրանց: Հոսպիտալացվեց ավելի քան 50 վիրավոր՝ և՛ ոստիկան, և՛ քաղաքացի: Ըստ ոստիկանության հուլիսի 21-ի հայտարարության, բերման է ենթարկվել 136 քաղաքացի՝ «զանգվածային անկարգություններ» կազմակերպելու կասկածանքով: Սակայն, Հատուկ քննչական ծառայությունը (ՀՔԾ) հուլիսի 21-ին հայտարարեց, որ 28 անձ է բերման ենթարկվել:[5]

ՔՀՊ-ի դիտորդների ձեռքին է «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության պաշտոնական հարցման պատասխանի պատճենը, որում ոստիկանությունը բերման ենթարկվածների այլ թվեր է ներկայացնում՝ 114 հոգի հուլիսի 17-ին, 25 հոգի՝ հուլիսի 18-ին, 129 հոգի՝ հուլիսի 20-ին: Այսպիսով, բավականին դժվար է հաստատել բերման ենթարկված ցուցարարների իրական թիվը:

---

4 «Ազատություն» ռադիոկայան, «Ոստիկանություն Իրականացվում է հակաահաբեկչական օպերացիա» *http://rus.azatutyun.am/a/27866479.html*

5 «Ազատություն» ռադիոկայան, «Ոստիկանություն բերման է ենթարկվել 136 մարդ» *http://rus.azatutyun.am/a/27871719.html*

Հուլիսի 21-ին և 22-ին ցույցերը շարունակվեցին առանց էական միջադեպերի: Հուլիսի 23-ին զինյալներն ազատ արձակեցին ՊՊԾ-ում պահվող բոլոր պատանդներին՝ պահանջելով, որ փոխարենը իշխանություններն ապահովեն մամուլի կենտրոնի ստեղծումը՝ ՊՊԾ գնդի տարածքում:[6] Սակայն, նրանց պահանջը չկատարվեց, իսկ զինյալները շարունակեցին զրաված պահել ոստիկանական զորամասը:

Հուլիսի 23-ին Հայաստանի Հատուկ քննչական ծառայությունը հայտարարեց, որ քրեական գործ է հարուցվել՝ ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման մասին հաղորդումների կապակցությամբ:[7]

Հուլիսի 25-ի դրությամբ խաղաղ ցույցերին մասնակցությունը աճեց մինչև 2-3 հազար մարդ, ովքեր երթով անցան քաղաքի փողոցներով՝ վանկարկելով «Սերժիկ, հեռացի՛ր» և «Սասնա ծռեր»:[8]

Ցուցարարները շարունակում էին հավաքվել Ազատության հրապարակում և Խորենացի փողոցում: Ոստիկանությունը փորձում էր սահմանափակել Խորենացիում հավաքվողների թիվը, բայց մեծ բախումներ չէին լինում: Հուլիսի 28-ին հազարավոր ցուցարարներ Ազատության հրապարակից երթ արեցին դեպի Խորենացի փողոց:

Հուլիսի 27-ին ոստիկանությունը հաղորդեց, որ զինյալները պատանդ են վերցրել «շտապ օգնության» չորս հոգանոց անձնակազմին՝ երկու բժիշկ, մեկ բուժքույր, և մեկ ֆելշեր, որոնք զորամաս էին մտել՝ բախումներում վիրավորված երկու զինյալներին բուժօգնություն ցույց տալու համար: Բժիշկներից մեկին՝ Սալվադոր Խեչոյանին թույլ էին տվել խոսել «Արմենիա» հեռուստաընկերության եթերում: Նա հաստատեց, որ ինքն ու երկու գործընկերները պատանդի կարգավիճակում են: Այդ երեկո ֆելշերին ազատ արձակեցին:

Հուլիսի 29-ին ցուցարարները հավաքվեցին Ազատության հրապարակում: Նրանք երթով անցան քաղաքով՝ դեպի Խորենացի փողոց և Սարիթաղ թաղամաս, որը գտնվում է ՊՊԾ գնդին հարող բարձունքի վրա: Երբ ցուցարարները հասան Սարիթաղ, ոստիկանության ուժերը շրջապատեցին նրանց: Սկսվեցին բանակցություններ բարձրաստիճան ոստիկանների, պատգամավորների և ակտիվիստների միջև՝ հնարավոր բախումները կանխելու համար: Այնուհետև, առանց օրենքով սահմանված կարգով նախազգուշացման՝ շրջապատման մեջ գտնվող ցուցարարների նկատմամբ սկսեցին կիրառել հատուկ միջոցներ: Մարդիկ թաքնվում էին տեղի բնակիչների տներում, բայց ոստիկանները գրոհում էին նաև մասնավոր տները և որոշ դեպքերում ծեծում և՛ ցուցարարներին, և՛ տեղի բնակիչներին: Բազմաթիվ ցուցարարներ լուրջ վնասվածքներ և այրվածքներ են ստացել:

2016թ հուլիսի 30-ին «Սասնա ծռերը» ցած դրեցին զենքերը և հանձնվեցին իշխանություններին: Հետագա օրերին շարունակվեցին խաղաղ ցույցերն ու երթերը՝ ի պաշտպանություն շարժման վիրավոր և ձերբակալված անդամների, բայց աստիճանաբար հասարակական ակտիվությունը մարեց, և այլևս հաղորդումներ չեղան ոստիկական բռնությունների մասին:

6 Panorama.am, «Սասնա ծռերը» ազատել են երկու պատանդի՝ մամուլի կենտրոն ստեղծելու դիմաց *http://www.panorama.am/ru/news/2016/07/23/*

7 RFER, A case is opened on the excessive use of force by police *http://rus.azatutyun.am/a/27876670.html*

8 «Ազատություն» ռադիոկայան, «Հազարավոր մարդիկ երթ են անում՝ ի աջակցություն զինյալների» , *http://www.azatutyun.am/a/27879939.html*; Azjazeera, Բախում ցուցարարների եւ ոստիկանների միջեւ Հայաստանում պատանդառության հետ կապված *http://www.aljazeera.com/news/2016/07/armenia-protesters-police-clash-hostage-crisis-160721052049006.html*

Հավաքների ազատության իրավունքի խախտումները և իրավապահ մարմինների կողմից անհամաչափ ուժի կիրառումը

ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամները հետազոտել են ականատեսների վկայությունները, ֆոտո և վիդեո նյութերը, իրեղեն ապացույցները և տուժածների տրամադրած բժշկական փաստաթղթերը, որպեսզի գնահատեն, թե արդյո՞ք ոստիկանության կիրառած ուժը համաչափ էր:

Ըստ Հայաստանի առողջապահության նախարարության, հուլիսի 20-ի և 29-ի դեպքերից հետո 111 անձ է դիմել բուժօգնության, այդ թվում՝ ոստիկաններ.[9] Առկա էին հաղորդումներ, որ իրական թիվը հավանականորեն ավելի մեծ է, քանի որ վիրավորներին բուժօգնություն են տրամադրել մի քանի հիվանդանոցում, իսկ միայն Երևանի հյուսիսում ընկած Նոր Նորք թաղամասի «Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցում բուժօգնություն է ստացել 50 ցուցարար: Սակայն, այս հաղորդումները չեն հաստատվել, քանի որ հնարավոր չի եղել ձեռք բերել սպառիչ վճակագրական տվյալներ:

ՔՀՊ փաստահավաք խմբի անդամները լսել են հուլիսի 29-ի լույս 30-ի գիշերը վիրավորված տուժողներից 11-ի վկայությունները: Նրանցից յոթը վիրավորվել էին խլացուցիչ նռնակից և/կամ ծեծի ենթարկվել: Նրանցից միայն երկուսն էին դիմել «Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոց, այնինչ մյուսները բուժօգնություն էին ստացել այլ հիվանդանոցներում:

Հուլիսի 30-ին ՔՀՊ փաստահավաք խմբի անդամներն այցելել են «Գրիգոր Լուսավորիչ» հիվանդանոցի «շտապ-օգնության» բաժանմունք: Հիվանդանոցի մուտքը հսկում էին զինված տղամարդիկ, որոնք դիմակով էին: Երկու ոստիկան հերթապահում էին բաժանմունքի ներսում: Բուժանձնակազմից հայտնեցին ՔՀՊ-ի պատվիրակներին, որ հուլիսի 29-ին Սարիթաղում վիրավորված 50 մարդու են բերել շտապօգնության մեքենաներով: Հիվանդանոցի տնօրեն Դավիթ Մանուկյանը հայտնեց, որ մարմնական վնասվածքների թվում էին վիրավորումներ ոտքերի շրջանում, այրվածքներ, ուղեղի ցնցում և աչքի կորուստ: 50 վիրավորից 14-ին անհրաժեշտ էր ստացիոնար բուժում:[10]

Հուլիսի 20-ին և 29-ին ցույցերը ցրող ոստիկանական կազմավորումների թվում էին պարեկապահակային ծառայությունը, հասարակական կարգի պաշտպանության գումարտակը, որը հայտնի է «Հրեշտակներ» անունով և ոստիկանության հատուկ նշանակության ջոկատը: Ինչպես նմանատիպ նախկին իրադարձություններում, քաղաքացիական հագուստով ոստիկանները նույնպես մասնակցում էին ցույցի ցրմանը: Նրանց համագործակցությունը համազգեստավոր ոստիկանության հետ հաստատել են ցույցերի տեսանկարահանումները և ականատեսները ՝ ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույցներում:

Հուլիսի 20-ին, մոտ 500 ցուցարար է հավաքվել Խորենացի փողոցում՝ գրավված գնդի մոտակայքում:[11] Այն բանից հետո, երբ ոստիկանությունը կանխել է ցուցարարների երթը փողոցներով, մի շարք ցուցարարներ սկսել են քարեր նետել: Մի տեսագրությունում երևում են ագրեսիվ վարք ցուցաբերող ցուցարարներ. նրանք ոստիկանների վրայից քաշում են սաղավարտներն ու պաշտպանական վահանները և քարեր են նետում նրանց վրա: Ի պատասխան, ոստիկանները առանց օրենքով սահմանված կարգով նախազգուշացման և ցուցարարներին տարածքից հեռանալու համար ժամանակ տրամադրելու կիրառել են հատուկ միջոցներ, և ցուցարարները սկսել են ցրվել: ՔՀՊ-ի փաստահավաք խմբի դիտարկմամբ, կիրառված հատուկ միջոցներն էին լուսաձայնային նռնակները, մահակները գազային նռնակները: Այս մասնավոր դրվագի փաստերի վերլուծությունից կարելի է եզրահանգել, որ ոստիկանության կողմից այս տիպի միջոցների կիրառումը արդարացված էր: Սակայն, դրանից հետո ոստիկանները հետապնդել են մարդկանց, երբ նրանք լքում էին տարածքը, և դաժան ծեծի էին ենթարկում գրեթե բոլորին՝ անհամաչափ ուժ կիրառելով: Հայաստանի առողջապահության նախարարությունը,

9 «Ազատություն» ռադիոկայան, «Առողջապահության նախարարություն Բուժօգնության է դիմել 60 անձ» *http://rus.azatutyun.am/a/27889539.html*

10 ՔՀՊ-ի հարցազրույցը Դավիթ Մանուկյանի հետ, 2016թ օգոստոսի 1

11 ՔՀՊ-ի հարցազրույցը Աղաբեկ Առաքելյանի հետ, 2016թ հուլիսի 29

ինչպես հաղորդել է «Ինտերֆաքս» լրատվական գործակալությունը, ասել է, որ բախումների հետևանքով հոսպիտալացվել է 51 անձ, այդ թվում՝ 28 ոստիկան:[12]

Որոշ խաղաղ ցուցարարներ պատմել են ՔՀՊ-ի փաստահավաք խմբին, որ իրենք հայտնվել են ագրեսիվ ցուցարարների և ոստիկանության դիմակայության մեջտեղում և փաստորեն բռնության են ենթարկվել երկու կողմերից: Նրանք չեն լսել ոստիկանության նախազգուշացումը, ուստի և չեն կարողացել տեղափոխվել ավելի ապահով վայր: Ցուցարարներից մեկը (ով վկայություն տվեց՝ իր անունը չհրապարակելու պայմանով) այսպես է նկարագրում իրադարձությունները.

> «Ես և ընկերներս մի կողմի վրա էինք կանգնած: Հանկարծ հա՛մ ոստիկանները, հա՛մ ցուցարարները սկսեցին իրար վրա քարեր շպրտել: Քանի որ էնտեղ էի կանգնած, մի դատարկ շիշ ընկավ մեզ վրա, հետո ինչ-որ բան պայթեց մեր կողքին: Մենք ոստիկանների ու ցուցարարների միջև բախման տեղից մի 30-40 մետր էինք հեռու: Մենք սկսեցինք հեռանալ, ինչ-որ բան էր պայթում մեր շուրջը, ու հետո միայն ներքև նայեցի ու տեսա, որ ոտքիցս արյուն է գալիս: Հետո հասկացա, որ մեջքից էլ եմ վիրավոր: Մենք անմիջապես գնացինք հիվանդանոց»:

Հուլիսի 29-ի դեպքերին վերաբերող փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ոստիկանները անհամաչափ ուժ են կիրառել երկու վայրում՝ Խորենացի փողոցում և Սարիթաղ թաղամասում:

Ազատության հրապարակում հավաքված խաղաղ ցուցարարները մոտավորապես ժամը 21-ի սահմաններում երթի են դուրս եկել՝ ծափերով ու վանկարկումներով: Նրանք գնացել են Սարիթաղ թաղամաս, որը բարձրադիր է ՊՊԾ գնդի նկատմամբ: Մոտենալով բարձունքին՝ նրանք տեսել են, որ ոստիկանները արգելափակում են տարածքի փողոցները: ՔՀՊ-ի փաստահավաքները մանրազնին ուսումնասիրել են տեսագրությունները և հարցազրույց են ունեցել ավելի քան 20 տուժածի և ականատեսի հետ և կարող են հաստատել, որ երթը խաղաղ բնույթ է կրել, շատերն իրենց երեխաների հետ էին: Սակայն, երբ ցուցարարները մոտեցել են թաղամասին, ոստիկանները զինամթերք են գործի դրել ցուցարարներին ցրելու համար: ՔՀՊ-ի հետ զրուցած մի խումբ ականատեսներ նշել են, որ ոստիկանները ոչ մի նախազգուշացում չեն արել նախքան հատուկ միջոցներ կիրառելը, այդ թվում՝ բազմաթիվ ռեակտիվ արկեր, ձեռքի և բազմատարր լուսաձայնային «Վզլյոտ-Մ» տեսակի նռնակներ: Հատուկ միջոցների տեսակները ՔՀՊ-ի պատվիրակները զատորոշել են պայթյունները պատկերող տեսանյութերի ուսումնասիրությամբ::

> «Նռնակները սուլոցով վեր էին թռնում պարուրաձև հետագծով ու հետո ընկնում: Մեկն ընկավ իմ ոտքին, ու մինչև հասկացա, որ ինձ է կպել, արդեն բոցերի մեջ էի: Երբ պայթյունը լսեցի, կարծեցի՝ կփախնեմ նռնակից, բայց արդեն վառվում էի ու չէի կարող շարժվել»,- պատմել է Թամար Մանուկյանը, որը հիվանդանոցում բուժվում էր երկրորդ աստիճանի այրվածքներից, որ ծածկել են նրա մաշկի 16 տոկոսը, այդ թվում՝ դեմքը:[13]

Անի Հարությունյանը ցույցի էր գնացել իր քրոջ և մորաքրոջ հետ: Երեքն էլ վիրավորվել են լուսաձայնային նռնակներից: Անին նշել է, որ ոստիկանները արգելափակում էին փողոցները, և հետևաբար ցուցարարները չէին կարող նահանջել::

> «Երբ հասանք Սարիթաղ, ոստիկաններն ինչ-որ բան գցեցին բազմության մեջ: Ամեն տեղ լուսաձայնային նռնակներ էին նետում: Ես խլացա, բան չէի լսում: Ոտքս վիրավոր էր: Ծուխ էր ամեն տեղ, ու դժվար էր հասկանալ՝ ուր է պետք գնալ: Մենք վազում էինք, ոստիկաններն էլ՝ մեր հետևից: Մեզ չէին թողնում գնայինք: Տաքսի բռնել էլ չէի կարող, որովհետև բոլոր փողոցները փակել էին: Ինչ-որ բան էին գցում, ինչից արցունքներս գնում էին, կոկորդս քոր էր գալիս: Խուճապի մեջ կորցրեցի քրոջս ու մորաքրոջս: Ես վազում էի: Տեղի բնակիչները ինձ ներս առան ու փրկեցին»[14]

12 «Կավկազսկի ուզել», «Երեւանում բախումներից տուժածների թիվը անցնում է 50-ը» 50 *http://www.eng.kavkaz-uzel.eu/articles/36297/*

13 ՔՀՊ հարցազրույցը Թամարա Մանուկյանի հետ, 2016 հուլիսի 31

14 ՔՀՊ հարցազրույց Անի Հարությունյանի հետ, 2016 օգոստոսի 1

Պետք է նկատել, որ ցույցի ցրումը տեղի է ունեցել նեղ փողոցներով ու կիպ իրար կողք կառուցված սեփական տներով բնակելի թաղամասում: Որոշ նռնակներ ընկել են տների մեջ և վիրավորել նաև պատահական անցորդների: Ցուցարար Լալա Ասլիկյանը հիշում է.

«Մի նռնակ նետեցին մի տուն, որտեղ մարդիկ թաքնվել էին: Տեսա, որ կրակ բռնվեց մի տան տանիքում: Լսել եմ, որ էլի հրդեհներ են եղել»:[15]

Մեկ այլ ականատես՝ Էդուարդ Արթենյանն, ասում է, որ տեղի բնակիչներն են իրեն ապաստան տվել, որ իրեն ու ընկերոջը օգնեն խուսափել ոստիկանական բռնությունից: Այնտեղ նա տեսել է վիրավոր ոտքով մի բնակչի. երիտասարդը դուրս էր եկել իր շանը ման տալու, երբ ցույցի ցրումն սկսվել էր:[16]

Լուսաձայնային նռնակները ցուցարարների շրջանում լուրջ մարմնական վնասվածքների պատճառ են դարձել: Տուժածներից մեկը իր բուժզննության արդյունքներն է ցույց տվել ՔՀՊ-ի փաստահավաք խմբին: Նրա մոտ ախտորոշել էին այրվածքներ, այդ թվում՝ գլխին, քթին և աչքերին, և մարմնական վնասվածք՝ կոտորակառումբի պատճառով:[17]

Քաղաքացիական հագուստով անձանց մի խումբ, որոնց ինքնությունը հայտնի չէ, գործում էր ոստիկանության համակարգմամբ և հետապնդում էր Սարիթաղով մեկ փախչող ցուցարարներին: Ըստ հաղորդումների, այդ մարդիկ բռնում էին ցուցարարներին և ծեծում երկաթե ձողերով ու փայտե ծանր մահակներով:

ՀՀ ոստիկանության մասին օրենքում (հոդված 29[18]) նշված են հատուկ միջոցների կիրառման դեպքերը: Օրենքը հստակորեն սահմանում է, որ նախքան ուժ կիրառելը, ոստիկանները պետք է զգուշացնեն ցուցարարներին: Սակայն, ո՛չ հուլիսի 20-ին, ո՛չ 29-ին պատշաճ զգուշացում չի արվել ցուցարարներին: Հուլիսի 29-ին ոստիկանները ցուցարարներին զգուշացրել են փողոցը լքել 10 րոպեում, բայց այդ հայտարարությունն անելուց անմիջապես հետո անցել են զինամթերքի կիրառման, ինչպիսիք են լուսաձայնային նռնակները, գազային նռնակները, ռետինե մահակները, փայտե մահակները և մետաղե ձողերը: Ցուցարար Սեդրակ Առաքելյանի վկայությամբ,

հայտարարությունից անմիջապես հետո ոստիկանները սկսեցին լուսաձայնային նռնակներ նետել իրենց վրա ու վազել իրենց ուղղությամբ: «Ասացին՝ 10 րոպե ենք տալիս, բայց իրականում ընդամենը 10 վայրկյան էր»:[19]

Այս խոսքերը հաստատում է ՔՀՊ-ի ձեռք բերած մի տեսանյութը: Հուլիսի 29-ին Սարիթաղում ոստիկանները հատուկ միջոցներ են սկսել կիրառել՝ առանց նախազգուշացման:

Հարցազրույցին մասնակցող բոլոր ակտիվիստներն ու ցուցարարները հարցազրույցի ընթացքում պնդում էին, որ ցույցին մասնակցելու էին գնացել խաղաղ նպատակներով և տրամադրվածությամբ, ինչպես նաև որպեսզի կանխարգելեն և թույլ չտան ՊՊԾ գնդի վրա գրոհը: Ոմանք վկայել են նաև այն մասին, որ ցուցարարները ագրեսիա են ցուցաբերել ոստիկանների հանդեպ միայն այն ժամանակ, երբ ոստիկանները սկսել են ցույցի վայրից անհիմն, անօրինական ձևով ակտիվիստներին ծեծի ենթարկելով առևանգել: Այստեղից կարելի է հետևություն անել նաև, որ ցուցարարների ագրեսիան պայմանավորված էր ոստիկանների դաժան վերաբերմունքով, ուղղորդված՝ իրենց պաշտոնական լիազորությունները չարաշահելով:

Ցուցարարները հիմնականում խաղաղ էին: Ո՛չ հուլիսի 20-ին, ո՛չ 29-ին, ոստիկանները չեն տարբերակել ագրեսիվ վարք դրսևորող ցուցարարներին՝ խաղաղ վարք դրսևորող ցուցարարներից, ոչ էլ հաշվի են առել երեխաների ներկայությունը: Մարատ Յավրումյանը պատմում է, որ Խորենացի փողոց էր գնացել իր 15-ամյա դստեր հետ՝ նպատակ ունենալով մասնակցել խաղաղ ցույցի: Երբ Մարատը հասկացել է, որ իրադրությունը վտանգավոր է դարձել, փորձել է դստեր հետ հեռանալ տարածքից, բայց ոստիկանները մոտեցել են նրանց: Նա

15 ՔՀՊ հարցազրույցը Լալա Ասլիկյանի հետ, 2016 հուլիսի 31

16 Այս տիպի աջակցությունը շատ տարածված էր, տեղի բնակիչները շատ ցուցարարների են «փրկել» եւ աջակցել

17 Փաստաթուղթ, տուժող K1#, փաստագրել է ՔՀՊ-ն՝ 2016-ի օգոստոսի 1-ին

18 ՀՀ օրենքը ոստիկանության մասին http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1271&lang=arm&enc=utf8 *#4http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1271&lang=rus#4*

19 ՔՀՊ հարցազրույցը Սեդրակ Առաքելյանի հետ, 2016 հուլիսի 30

կանգնել է դստեր դիմաց՝ փորձելով նրան թաքցնել, ու ասել է ոստիկաններին, որ ցույցին խաղաղ է մասնակցել ու փորձում է հեռանալ: Նա ոստիկաններին ցույց է տվել իր բաց ափերը: Չնայած դրան, ոստիկանները սկսել են ծեծել նրան, քարշ են տվել ոստիկանական պատի հետևը և այնտեղ շարունակել ծեծել: Մարատին ծեծող ոստիկանները նրա աղջկան հրել են մի կողմ ու թողել, որ մենակ ելք գտնի վտանգավոր իրադրությունից:[20]

> 16-ամյա Սայաթ Հարությունյանը նույնպես ոստիկանության բռնության զոհ է դարձել, չնայած խաղաղ վարք է դրսևորել:[21]

Հենց Սայաթը մտել է բազմության մեջ, սկսվել է ոստիկանական հարձակումը: Կողքին նռնակ է պայթել և պատճառել մարմնական վնասվածքներ, ինչի հետևանքով Սայաթը կորցրել է աչքը::

Հարցազրույց տվածներից երկուսը ՔՀՊ փաստահավաք խմբի անդամներին պատմել են, որ տեսել են, թե ինչպես են ոստիկանները ներխուժում տեղի բնակիչների տները, խուզարկում տները և ծեծում որոշ բնակիչների: Այս տեղեկությունները հաստատվել են փաստահավաք խմբի ձեռք բերած նկարահանումների շնորհիվ: Օրինակ՝ «Սիվիլնեթ» (CivilNet.am) լրատվամիջոցի լրագրող Սարգիս Խարազյանը վկայում է.

> «Որոշ բնակիչներ դուրս էին գալիս կողքի փողոցներից ու բողոքում կատարվածի դեմ: Նրանք ասում էին, որ իրենց ահաբեկել են, զինված ոստիկանները նրանց տներն են մտել առանց որևէ փաստաթուղթ ցույց տալու ու զենք են պահել իրենց վրա: Մի երեխա այնքան էր վախեցել ու այնքան խորն էր թաքնվել, որ չէին կարողանում գտնել»:[22]

«Սիվիլնեթ»-ի մեկ այլ լրագրող մի միջադեպ է նկարահանել, որում Սարիթաղի բնակիչ մի կին պատմում է, թե ոնց են ոստիկանները մտել իրենց տուն ու ծեծել նրանց: Բնակիչը պատմում է, որ ոստիկանները իր տուն են մտել ու սպառնացել են, որ ընտանիքի բոլոր անդամներին ոստիկանություն կտանեն: Ասում է, որ իր երեխաները տանն էին, իսկ ոստիկանները հորը ծեծել են նրանց աչքի առաջ:

Սարիթաղի բնակիչ ԱԱ-ն (ում ցանկությամբ անունը չենք հրապարակում անվտանգության նկատառումներից ելնելով) պատմել է ՔՀՊ-ի փաստահավաք խմբին.

> «Երբ ոստիկանները սկսեցին լուսաձայնային նռնակներ նետել, ես մոտ 12 այլ ցուցարարի հետ վազեցի ու մտա առաջին պատահած տունը: Ոստիկանները նռնակ գցեցին տան վրա, ու ցանկապատը հրդեհվեց: Երկրորդ նռնակը նետեցին տան մեջ, ու տան մեջ էլ պայթեց: Շատ մարդ վիրավորվեց, բոլորը խուճապի մեջ էին: 10-15 րոպեից տանտերը խնդրեց, որ բոլորը տեղափոխվեն կողքի տուն ու տեղավորվեն դրա նկուղում, քանի որ ոստիկանները մտնում էին տները ու տանում մարդկանց: Ես ու մի շարք ցուցարարներ նկուղում մնացինք մոտ մեկ ժամ»:[23]

ՔՀՊ-ի փաստահավաք խումբը տեղեկացել է նաև բազմաթիվ դեպքերի մասին, երբ հիվանդանոցներում դժկամորեն են տուժածներին բժշկական փաստաթղթեր տրամադրել, որոնք փաստում են նրանց մարմնական վնասվածքների և դրանց պատճառների մասին: Համոզմունք կա, որ բուժաշխատողները վախեցել են ոստիկանության հաշվեհարդարից: Առանց այդ փաստաթղթերի տուժածների համար դժվար կլինի դատի տալ իրավապահներին և դատարանում ապացուցել վնասվածքների բնույթն ու ծագումը: «1in.am» կայքի լրագրող Մարիամ Գրիգորյանը լուսաբանում էր հուլիսի 29-ի իրադարձությունները: Նա քայլել է ցուցարարների հետ, ովքեր երթ էին անում Ազատության հրապարակից դեպի Սարիթաղ: Երբ ոստիկանները սկսել են ցրել հավաքը, Մարիամին ոտքից վիրավորել է լուսաձայնային նռնակը: Նրան թաքցրել են տեղի բնակիչները: Ավելի ուշ

20 ՔՀՊ հարցազրույցը Մարատ Ցավրումյանի հետ, 2016 հուլիսի 31
21 ՔՀՊ հարցազրույցը Սայաթ Հարությունյանի հետ, 2016 օգոստոսի 1
22 ՔՀՊ հարցազրույցը Սարգիս Խարազյանի հետ, 2016 հուլիսի 31
23 ՔՀՊ հարցազրույցը ԱԱ-ի հետ, 2016 օգոստոսի 1

նրա գործընկերը հաջողեցրել է նրա համար «շտապօգնություն» գտնել և դուրս բերել տեղանքից: Մարիամը հաղորդում է.

> «Շտապ օգնությունն ինձ տարավ Սբ. Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոց, չնայած Էրեբունի հիվանդանոցը շատ ավելի մոտ էր: Ինձ բուժօգնություն ցույց տվեցին: Ես այրվածքներ ունեի, ու ոտքիցս նռնակի բեկոր հանեցին: Ինձ տված փաստաթղթում նշված էր, թե մաշկս այրվել է տնային պայմաններում»:[24]

ՔՀՊ-ի փաստահավաք խումբը փաստագրել է, որ ոստիկանությունը տարերայնորեն է ուժ կիրառել, քանի որ թիրախավորել է ոչ միայն ագրեսիվ, այլև խաղաղ ցուցարարներին: Ցույցը ցրելուց հետո ոստիկանությունը հետապնդել և ֆիզիկական բռնության է ենթարկել մի շարք խաղաղ ցուցարարների: Հուլիսի 29-ի հանրահավաքի առնչությամբ ՔՀՊ-ի առաքելության եզրակացությունն է, որ ոստիկանության կիրառած ուժը չափազանց մեծ և անհամաչափ է եղել՝ մարմնական վնասվածքներ պատճառելով տասնյակ ցուցարարների և պատահական մարդկանց:

Բերման ենթարկելը, առևանգելը և անազատության մեջ պահված անձանց նկատմամբ ցուցաբերված անմարդկային վերաբերմունքը

Որոշ ցուցարարներ բերման են ենթարկվել դեռ հուլիսի 17-ին՝ հավաքների առաջին իսկ օրը: Ոստիկանության հաղորդագրության համաձայն, ցույցերի ընթացքում ընդհանուր առմամբ 365 հոգի է բերման ենթարկվել ոստիկանական բաժիններ[25]: Սակայն, ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամների հետ զրույցներում հայաստանյան իրավապաշտպանները նշել են, որ բերման ենթարկվածների թիվը զգալիորեն ավելի մեծ է, քան հայտարարում են իշխանությունները տարբեր գնահատականներով՝ 500-700[26]: Շատ ցուցարարների բերման են ենթարկել Երևանի մոտակա քաղաքների ոստիկանական բաժիններ, ինչը նշանակում է, որ երևանյան բաժանմունքներն արդեն լիքն էին: Ավելին, ոստիկանությունը բերման ենթարկվածների շատ ավելի մեծ (726) թիվ է նշել «Իրազեկ քաղաքացիների միավորման» հարցմանն ի պատասխան[27]:

Բերման ենթարկված անձանց տարել են ինչպես Երևանի տարբեր վարչական շրջանների, մոտակա քաղաքների՝ Մասիսի, Վաղարշապատի, Աշտարակի և Աբովյանի ոստիկանական բաժիններ, այնպես էլ՝ հեռավոր Գյումրի և Վանաձոր քաղաքներ: Բողոքի ցույցերի առաջին օրերին բերման ենթարկածներին տարել են ոստիկանության 10/32 և10/33 զորամասեր:

2016թ հուլիսյան ցույցերի առնչությամբ բերման ենթարկվածների վկայությամբ, ձերբակալության և բերման ենթարկման ժամանակ հաճախ խախտվել են ընթացակարգային իրավունքները: Ոստիկանները բազմաթիվ խաղաղ ցուցարարներ են բերման ենթարկել Ազատության հրապարակից և Խորենացի փողոցից՝ ներկա լրագրողներին հայտնելով, թե մարդկանց տանում են ընդամենը անձի ինքնությունը ճշտելու համար: Սակայն, ոստիկանները ոչ մի անգամ չեն փորձել տեղում ստուգել մարդկանց անձը հաստատող փաստաթղթերը: Շատ դեպքերում, երբ հարց է տրվել բերման ենթարկելու պատճառների մասին, նրանք պատասխանել են «Լավ էլ գիտեք» կամ՝ «Հետո՛ կիմանաք»:

Երբեմն, ոստիկաններն ասում էին, որ բերման ենթարկելու պատճառը կա՛մ զենքեր ունենալն է, կամ էլ հասարակական կարգը խափանելու նպատակով ցուցարարներին զենք տրամադրելու հավանական փորձը:[28] Հուլիսի 17-ին բերման ենթարկված ակտիվիստ և «Ժառանգություն» կուսակցության անդամ Դավիթ Սանասարյանը պատմում է.

24 ՔՀՊ հարցազրույցը Մարիամ Գրիգորյանի հետ, 2016 հուլիսի 31

25 «Ազատություն» ռ/կ, «Ոստիկանությունը բերման է ենթարկել 136 հոգու» *http://rus.azatutyun.am/a/27871719.html*; «Ազատություն» ռ/կ, «Ոստիկանությունը բերման է ենթարկել 64 հոգու» *http://rus.azatutyun.am/a/27883952.html*; «Ազատություն» ռ/կ, «Ոստիկանությունը բերման է ենթարկել 165 հոգու» *http://rus.azatutyun.am/a/27889679.html*

26 ՔՀՊ հարցազրույցը Հայկուհի Հարությունյանի եւ Արթուր Սաքունցի հետ, 2016 օգոստոսի 1

27 Փաստաթղթեր N° 2, 3, 4, 5, 6, 7

28 ՔՀՊ հարցազրույցները Անտոն Իվչենկոյի, Արթուր Մինասյանի, Սեդրակ Առաքելյանի եւ Առնաս Տեր-Առաքելյանցի հետ

«Ես ու ընկերներս խնդրում էինք մեզ հայտնել մեզ բռնելու պատճառները, և ամեն անգամ նրանք խոստանում էին, որ կտան այդ տեղեկությունը, բայց չէին տալիս: Պատճառը բացատրեցին 40 րոպեից: Մեզ [ոստիկանները] հայտնեցին, որ մեզ բռնել են, քանի որ տեղեկություն ունեն, որ զենքեր ենք տարել ցույցի: Բայց մեզ խուզարկեցին ու փաստաթղթերը ստուգեցին միայն ոստիկանական տեղամասում»:[29]

Եղել են դեպքեր, որ ցուցարարներին առևանգել են քաղաքացիական հագուստով մարդիկ ու տարել ոստիկանական բաժանմունք: Ցուցարար Արա Պետրոսյանը վկայում է.

«Հուլիսի 20-ին ժամը 12:15-ին մարդիկ հանգիստ կանգնած էին Խորենացի փողոցում: Ես քայլեցի Քրիստափորի փողոց, որ խանութ գնամ: Քաղաքացիական համարներով մի մեքենա կանգնեց, չորս տղամարդ մոտեցան ինձ ու պահանջեցին, որ նստեմ մեքենան: Ես մերժեցի, քանի որ ինձ համար հասկանալի չէր, թե ովքեր են: Նրանք բռնեցին ձեռքերս ու քաշեցին մեքենայի մեջ: Փորձում էին թևերս ոլորել, ես էլ գոռում էի նրանց վրա, պահանջում էի՝ բացատրեն, թե ուր են ինձ տանում: Ասացին, թե հետո կիմանամ, երբ տեղ հասնենք: Ու ես նորից սկսեցի գոռալ: Նրանք գլուխս սեղմել ու ծեծում էին ինձ: Հետո իմացա, որ տանում էին Էրեբունու քաղմաս»:[30]

Տուժածները փաստում են, որ բերման ենթարկելու ընթացքում ոստիկանները նրանց դաժան ծեծի էին ենթարկում: Առնաս Ավետիքյանը պատմել է ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամներին, թե ինչպես են հուլիսի 29-ին իրեն բերման ենթարկել Խորենացի փողոցից.

«Երկու մարդ բռնեցին ձեռքերս: Փորձեցին քարշ տալ, բայց չկարողացան: Խփեցին ինձ ու տարան ոստիկանական բարիկադի հետևը: Այնտեղ սկսեցին ծեծել ինձ: Խփում էին փորիս ու մեջքիս: Քանի որ քաղցկեղ ունեմ, մտածեցի, որ կարող են լուրջ վնաս տալ, եթե չասեմ, որ առողջական խնդիրներ ունեմ: Ասացի, բայց նրանց պետքը չէր: Էլի ծեծեցին ու մտցրեցին «Ուազ» մեքենան[31], որտեղ արդեն շատ այլ ցուցարարներ կային: Մեկը լրիվ արնաշաղախ էր: Քաղաքացիական հագուստով մարդիկ ծեծում էին բերման ենթարկվածներին»:[32]

Մի քանի տուժածներ հաղորդել են ոստիկանական բաժիններում ոստիկանների կողմից ծեծի ենթարկվելու մասին: Ցուցարար Վարդգես Գասպարին, ում բերման էին ենթարկել հուլիսի 17-ին, պատմում է.

«Ես մենակ էի [ոստիկանական] տեղամասում, բայց դուռը բաց էր: Ժամանակ առ ժամանակ գոռում էի՝ Սերժիկը մարդասպան է, չար է: Քաղաքացիական հագուստով մեկը ներս եկավ, ես գետնին էի, կոշիկը դրեց քիթ-բերանիս ու սկսեց սեղմել՝ ասելով «Հիմա՞ ոնց ես գոռալու»: Ես գլուխս թափ տալով շարունակեցի գոռալ՝ «Սերժիկ մարդասպան»: Նա տեսավ, որ չի կարողանում ինձ լռեցնել, սկսեց քացով խփել գլխիս: Խփեց բազմաթիվ անգամ, չգիտեմ քանի, հետո գնաց»:[33]

Հուլիսի 18-ին բերման ենթարկված Արթուր Մինասյանը պատմում է.

«Երկու ոստիկան ինձ տարան ոստիկանական մեքենա: Հետո բերեցին իմ ընկեր Դավիթին և մի ուրիշ մարդու: Մեքենայի դուռը փակելուց հետո մեզ ստիպեցին պառկել գետնին: Նրանցից մեկը ծունկը դրեց մեջքիս՝ ճզմելով ձեռքերս: Այդ ընթացքում մյուս ոստիկանը սկսեց խփել ու հայհոյել ինձ: Բռունցքներով ու քացիներով էին խփում: Մեզ ծեծում ու խոշտանգում էին մոտ 15-20 րոպե, ինչից հետո նրանցից մեկը հրամայեց պաչել ու լպստել իրենց կոշիկները: Երբ տեղ հասանք Արթուրը հետո իմացավ, որ դա Դավիթաշենի ռազմական ոստիկանության զորմասն էր], լսեցինք, որ մի սպա հրամայում էր միզել մեր վրա»:[34]

Ականատեսների վկայությունների և փաստաբաններից ՔՀՊ-ի ձեռք բերած տեղեկությունների համաձայն,

29 ՔՀՊ հարցազրույցը Դավիթ Սանասարյանի հետ, 2016 հուլիսի 29
30 ՔՀՊ հարցազրույցը Արա Պետրոսյանի հետ, 2016 հուլիսի 29
31 Ոստիկանական մեքենա, որ գործածվում է հետսովետական երկրներում
32 ՔՀՊ հարցազրույցը Առնաս Տեր-Ավետիքյանցի հետ, 2016 հուլիսի 31
33 ՔՀՊ հարցազրույցը Վարդգես Գասպարիի հետ, 2016 հուլիսի 29
34 ՔՀՊ հարցազրույցը Արթուր Մինասյանի հետ, 2016 հուլիսի 30

բերման ենթարկվածների մեծ մասը ոստիկանական բաժիններում է պահվել 5-15 ժամ, իսկ որոշ դեպքերում՝ 24: ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամների հետ հարցազրույց ունեցածներից ոչ մեկին սնունդ չէին առաջարկել՝ անազատության մեջ գտնվելու ժամանակ: Մեծ մասին թույլ չեն տվել հոգալ բնական կարիքները և անգամ խմելու ջուր չեն տվել:

Վկայությունները ցույց են տալիս, որ հազվադեպ է տրամադրվել պատշաճ բուժօգնություն: Հուլիսի 20-ին Արսեն Թադևոսյանին բերման են ենթարկել Խորենացի փողոցից և ընթացքում դաժանորեն ծեծել են: Նրան տարել են Շենգավիթի ոստիկանություն: ՔՀՊ-ի պատվիրակներին նա պատմում է.

> «Այնտեղ գտնվել եմ հինգ ժամ ու շարունակ ասում էի, որ ինձ բժիշկ է պետք: Զգում էի, որ ծնոտս կոտրված էր երկու տեղից ու ձեռքով էի պահում: Բայց երբ խնդրում էի, որ բժիշկ կանչեն, ոստիկանները ծաղրում էին ինձ: Մի ոստիկան ասաց, թե անասնաբույժ է կանչելու, որ ինձ նայի: Նույն վերաբերմունքին էին արժանացնում մնացած բոլոր բերման ենթարկվածներին: Հինգ ժամ հետո ոստիկանության քննիչ եկավ ու ասաց, որ չեն կարող ինձ պահել կոտրած ծնոտով, ու շտապ օգնության բժիշկ կանչեցին: Բժիշկը պահանջեց, որ ինձ անմիջապես հիվանդանոց պառկեցնեն: Ինձ տարան «Էրեբունի» հիվանդանոց, որտեղ ռենտգեն արեցին ու հաստատեցին, որ ծնոտս կոտրված է, ու նաև ուղեղի ցնցում եմ տարել: Այնտեղ կար նաև Էպիլեպսիա հիվանդություն ունեցող անչափահաս տղա ում ծեծում էին մինչև գիտակցությունը կորցնելը»:

Փաստաբան, «Հելսինկյան ասոցիացիա» իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցիչ Արայիկ Պապիկյանը ՔՀՊ փաստահավաք խմբին պատմել է անազատության մեջ իր վստահորդ Հովհաննես Հարությունյանի նկատմամբ վերաբերմունքի մասին.

> «Այն բանից հետո, երբ դատարանը [հուլիսի 26-ին] որոշեց որպես նրա խափանման միջոց սահմանել կալանքը, նրան տեղափոխեցին «Դատապարտյալների հիվանդանոց»: Այնտեղի պայմանները շատ խղճուկ են: Այդ առավոտ էր վիրահատվել ու արդեն երեկոյան 19:00-ին տեղափոխեցին Դատապարտյալների հիվանդանոց: Այնպիսի տպավորություն էր, որ հիվանդանոցը չի վերանորոգվել 1940-ականներից, նրա սենյակը փոշոտ էր, ներկը պլոկված էր պատերից: Հովհաննեսին այնտեղ են տեղափոխել հուլիսի 26-ին, ու մինչև 29-ը նա պառկած էր արյունոտ սպիտակեղենի մեջ, ոչ ոք չի էլ փորձել նրան օգնել, որ սպիտակեղենը փոխեն: Հովհաննեսը վատ վիճակում էր, չէր կարողանում ինձ հետ 5 րոպեից երկար խոսել: Դատարանի որոշմամբ, Հովհաննեսին պետք է մեկուսացնեին, բայց հիվանդանոցում միայն երկու սենյակ կար, որ մեկտեղանոց էր, ու նրան պահում էին մի մեծ սենյակում, որը հիվանդների համար չէր նախատեսված: Այն կեղտոտ էր ու պատշաճ չէր հիվանդ խնամելու համար»:[35]

Պետք է նկատել, որ վիրավոր ցուցարարների մոտ մուտքը արգելված էր նույնիսկ քաղաքային հիվանդանոցներում: Հասկանալի չէ, թե ինչու էին այդ սահմանափակումները գործի դրվել, իսկ ՔՀՊ-ի պատվիրակության զրուցակիցները հաղորդեցին, որ իրենց էլ չեն տեղեկացրել այդ սահմանափակումների հնարավոր իրավական հիմքերի մասին: «Սասնա ծռերից» Աշոտ Պետրոսյանի դուստրը, որը մասնակցել էր հանրահավաքներին ու մարմնական վնասվածք էր ստացել հուլիսի 27-ին, վկայում է.

> «Հորս ուղարկել էին «Էրեբունի» հիվանդանոց: Գնացինք նրան տեսնելու: Մուտքը փակել էին սպեցնազի դիմակավոր զինվորականները: Միայն ազգականներին էին ներս թողնում: Ներս մտանք, ու մոտ երկու ժամից մի բժիշկ խոսեց մեզ հետ, պատասխանեց մեր հարցերին ու թույլ տվեց տեսակցել հորս: Բայց զինվորները փակել էին հորս սենյակի ճամփան ու թույլ չէին տալիս ներս մտնել: Հետո ես դուրս եկա, որ հարցազրույց տամ լրագրողներին, որից հետո ինձ այլևս ներս չթողեցին: Սպեցնազի զինվորներն ասացին, որ հրաման ունեն՝ ինձ ներս չթողնել»:[36]

Այլ ընթացակարգային խախտումների մասին նույնպես հաղորդվել է: Օրինակ՝ բերման ենթարկվածներից ոմանց թույլ չէին տվել ազգականներին հայտնել իրենց տեղը: Արթուր Մինասյանը փաստում է.

35 ՔՀՊ հարցազրույցը Արայիկ Պապիկյանի հետ, 2016 հուլիսի 30

36 ՔՀՊ հարցազրույցը Տաթեւիկ Պետրոսյանի հետ, 2016 հուլիսի 29

«Հուլիսի 17-ին ինձ թույլ տվեցին զանգ կատարել՝ անազատության մեջ 14 ժամ անցկացնելուց հետո: Քննիչն ասաց, թե դա բացառություն է, որովհետև ես փոքր երեխա ունեմ ու հաշմանդամ մայր: Որոշ բերման ենթարկվածների թույլ էին տալիս զանգ կատարել միայն չորս ժամ բազմակի խնդրանքներից հետո»:[37]

Բերման ենթարկվածներից շատերը հայտնել են, որ բերման ենթարկելու մասին իրենց որևէ պաշտոնական փաստաթուղթ չեն տվել: Ոստիկանները պարզապես թույլ են տվել հեռանալ կամ մեքենայով տարել են ու Երևանում ինչ-որ տեղ բաց թողել: ՔՀՊ-ի պատվիրակները փաստեր են ձեռք բերել, որ որոշ դեպքերում արձանագրություն են ստորագրել տվել մարդկանց, ովքեր այդ պահին ի վիճակի չէին կարդալ կամ հասկանալ գրածը:

Մարատ Յավրումյանը, որին դաժանորեն ծեծել էին Խորենացի փողոցում բերման ենթարկելիս, հուլիսի 29-ին վկայել է.

«Ինձ տարան ոստիկանական բաժանմունք, դեմքս արյան մեջ էր, քիթս՝ կոտրված: Ներս մտա, ու ոստիկանները սկսեցին բերման ենթարկման արձանագրություն լրացնել: Ես խնդրեցի շտապ օգնություն կանչել: Չգիտեմ՝ ինչ էր գրած արձանագրությունում, ուղղակի ստորագրեցի: Ուզում էի դուրս գալ, որովհետև շտապ օգնությունը եկել էր: Ինձ չեն ստիպել ստորագրել, բայց քանի որ ուզում էի գնայի շտապ օգնության հետ, ստիպված էի ստորագրել»:

Դեպքեր են եղել, երբ բերման ենթարկվածներին ստիպել են ստորագրել արձանագրությունները՝ նրանց իրավունքների մասին պատշաճ կերպով չծանուցելով: Փաստաբան Արայիկ Պապիկյանը՝ «Սասնա ծռերից» Աշոտ Պետրոսյանի և Հովհաննես Հարությունյանի պաշտպանը, ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամներին պատմել է, որ իր վստահորդներին խնդրել են ստորագրել ձերբակալության արձանագրությունները, երբ նրանք հիվանդանոցում էին, հենց նոր էին դուրս եկել վիրահատարանից ու դեռ գտնվում էին ընդհանուր անզգայացման ազդեցության տակ: Հետևաբար, նրանք ի վիճակի չէին կարդալու կամ հասկանալու, թե ինչ են ստորագրում: Ավելին, Հարությունյանին ու Պետրոսյանին խնդրել են ստորագրել թղթեր, որոնցով համաձայնություն են տալիս, որ նրանց պաշտպան տրամադրվի հանրային պաշտպանի գրասենյակից, չնայած որ երկուսն էլ համաձայնագիր ունեին փաստաբան Արայիկ Պապիկյանի հետ, որ իրենց պիտի նա ներկայացնի: Հիվանդանոցում Հարությունյանի և Պետրոսյանի ստորագրած թղթերը բարդացրել են նրանց փաստաբանի գործերը: Հենց Արայիկ Պապիկյանը իմացել է, որ իր վստահորդները թղթեր են ստորագրել, որով լիազորում են հանրային պաշտպանին՝ ներկայացնել իրենց շահերը, շտապել է դատարան: Երբ հասել է դատարան, դատական նիստն արդեն ավարտվել էր, և դատավորը որոշում էր կայացրել խափանման միջոց նշանակել երկամյա կալանքը:[38]

Գյումրիի Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի ղեկավար, ակտիվիստ և քաղաքացիական առաջնորդ Լևոն Բարսեղյանը, որին բերման են ենթարկել հուլիսի 26-ին, նույնպես դժվարություն է ունեցել հանդիպել իր փաստաբանին, երբ ազատությունից զրկված է եղել: Փաստաբան Հայկուհի Հարությունյանին նախ թույլ չեն տվել մտնել ոստիկանական այն տեղամաս, որտեղ պահում էին Բարսեղյանին: Հետո նրան թույլ չեն տվել առանձին խոսել իր վստահորդի հետ մինչև նրա հարցաքննությունը: Հայկուհին պատմում է.

«Ես հասա այնտեղ [ոստիկանական բաժանմունք] 14:30: Խնդրեցի, որ ինձ ներս թողնեն, բայց ինձ ասացին, թե բաց են թողել [Լևոն Բարսեղյանին]: Օրենքով, եթե մեկին բաց են թողնում, նրա ստորագրությունը պիտի լինի ոստիկանության ռեգիստրում, բայց ոստիկանները մերժեցին ինձ ցույց տալ գրանցամատյանը: Զանգեցի օմբուդսմենի գրասենյակ և խնդրեցի ստուգեն, թե ինչ է կատարվում: 15:30 եկան օմբուդսմենի գրասենյակի աշխատակիցները: Ես անմիջապես մուտքի մոտ էի կանգնած: Օմբուդսմենի ներկայացուցիչներն ինձ ասացին, որ տեսել են Լևոնի ստորագրությունը: Հարցրեցի, թե ինչո՞ւ են համոզված, որ դա իրոք Լևոնի ստորագրությունն էր: Հանկարծ Լևոնի եղբայրը բացեց

37 ՔՀՊ հարցազրույցը Արթուր Մինասյանի հետ, 2016 հուլիսի 30
38 ՔՀՊ հարցազրույցը Արայիկ Պապիկյանի հետ, 2016 հուլիսի 30

դուռն ու ինձ ձայն տվեց: Տեսանք, որ երկու ոստիկան մեքենայից դուրս են բերում Լևոնին ու բերում տեղամաս: Լրագրողները ներկա էին ու ֆիքսեցին դա: Ժամը 16:10-ին, մենք ոստիկանության բաժին մտանք միասին: Ես խնդրեցի մեզ առանձնասենյակ տրամադրեն՝ հարցաքննությունից առաջ մասնավոր խորհրդատվության համար: Ոստիկանական բաժանմունքի պետը, տեղակալը և տասը ոստիկան մեզ ուղեկցեցին մի սենյակ և թույլ չտվեցին, որ դուռը փակենք: Երկու այլ մարդու բերեցին նույն սենյակ, իսկ մի ոստիկան ներս եկավ, որ խուզարկություն կատարի: Լևոնը համարյա 14 ժամ անազատության մեջ էր եղել: Նրան ջուր չէին տվել և արգելել էին օգտվել զուգարանից: Ասաց, որ հոգնած է: Չէր քնել: Տեսա, որ վատ է զգում, ու շտապ օգնություն կանչեցի: 25 րոպե անց ինձ ասացին, որ շտապ օգնությունն եկել է, բայց ոստիկանները թույլ չեն տալիս, որ ներս գան: Ես բարձրաձայնեցի այդ տեղեկությունը, քանի որ օմբուդսմենի աշխատակիցները մեզ հետ էին: Ոստիկանները ստիպված էին ներս թողնել բժիշկներին: Լևոնի ճնշումը բարձր էր, իսկ զարկերակն անկանոն էր: Նրան ջուր տվեցին, իսկ բժիշկը ներարկում արեց: Այդ ընթացքում ոստիկանները բերման ենթարկելու արձանագրություն կազմեցին ու հարցաքննեցին Լևոնին»:[39]

Ալբերտ Բաղդասարյան
31 July at 06:13 ·

Համակարգող Խորհուրդը, որի անդամն եմ նաև ես, հայտարարել է իր գործունեության դադարեցման մասին, ելնելով այն բանից, որ մեծ մասը՝ նաև Ալեք Ենիգոմշյանը, կալանված կամ ձերբակալված են, մի մասն էլ ինչ-ինչ պատճառներով ի վիճակի չեն շարունակել իրենց գործունեությունը:
Սասնա ծռերից Վարուժան Ավետիսյանի հայտարարած վստահության արժանի գործիչները ձերբակալված են: Ձերբակալված է նաև վստահության աղբյուր Ալեք Ենիգոմշյանը:
Ուստի համարում եմ աննպատակահարմար, ոչ արդյունավետ ու նաև անօգտակար՝ իմ կողմից Սասնա ծռերի գործողությունով պայմանավորված Շարժումը կոորդինացնող Խորհրդի անունից գործելը:
Կրկին անգամ դիմում եմ հանրային վստահություն ունեցող անձանց, այդ թվում նաև պատգամավորների.- ստանձնել ստեղծված Շարժման առաջնորդումը, չթողնել Սասնա ծռերին միայնակ:
Անհրաժեշտության դեպքում պատրաստ եմ իմ հնարավորությունների չափով օգտակար լինել Շարժմանն ու Հայաստան Պետության վերակերտման պայքարին:
Ալբերտ Բաղդասարյան
31. 07:2016թ. Ժամը 7:10

Share

104

43 shares 42 comments

Շատ տուժածներ, որոնք ծեծի են ենթարկվել բերման ենթարկվելիս կամ վիրավորվել են լուսաձայնային նռնակներից, ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամներին ասել են, որ ոստիկանները նրանց առաջարկել են արձանագրությունները ստորագրել որպես վկաներ, ոչ թե որպես տուժողներ: Լրագրող Մարութ Վանյանը վկայում է.

«Ինձ տարան Գրիգոր Լուսավորիչ հիվանդանոց: Ոտքերիս վրա մի քանի վերք կար: Ծնկիս ջլերը պատռվել էին, ու բոլորովին չէի կարողանում շարժել ծունկս: Քննիչները եկան հարցաքննության և ուզում էին ինձնից ցուցմունք վերցնել որպես վկայի»:[40]

ՔՀՊ փաստահավաք խմբի ձեռք բերած վկայությունները ցույց են տալիս, որ շատ դեպքերում ցուցարարներին

39 ՔՀՊ հարցազրույցը Հայկուհի Հարությունյանի հետ, 2016 օգոստոսի 1

40 ՔՀՊ հարցազրույցը Մարութ Վանյանի հետ, 2016 օգոստոսի 1

բերման ենթարկելիս՝ ՀՀ ոստիկանությունը չի հարգել իրավական ընթացակարգային երաշխիքները: Մի շարք ականատեսներ հայտարարել են, որ ոստիկանական բաժանմունքներում անազատության մեջ գտնվելիս ենթարկվել են ֆիզիկական և/կամ հոգեբանական բռնության, ոմանք վկայել են նաև վատ վերաբերմունքի մասին: Այսպիսի հաղորդումները պահանջում են անհապաղ և անկախ հետաքննություն:

2016թ հուլիսի 17-30-ը ոստիկանների կատարած իրավախախտումների համար պատասխանատվությունը

Զեկույցը գրելու պահին երեք քրեական գործ էր հարուցվել 2016-ի հուլիսյան իրադարձությունների առնչությամբ:

Առաջին գործը վերաբերում է զանգվածային անկարգություններ կազմակերպելուն և մասնակցելուն: Այս գործի հետ կապված ավելի քան 100[41] անձ է ձերբակալվել, այդ թվում՝ գերազանցապես խաղաղ ցույցերի առաջնորդներ Արմեն Մարտիրոսյանը, Հովսեփ Խուրշուդյանը, Դավիթ Սանասարյանը՝ «Ժառանգություն» կուսակությունից, և Անդրեաս Ղուկասյանը՝ «Նոր Հայաստան» շարժումից: Օգոստոսի 1-ին, դատարանը որոշեց որպես խափանման միջոց երկամսյա կալանք կիրառել Արմեն Մարտիրոսյանի, Հովսեփ Խուրշուդյանի, Դավիթ Սանասարյանի և Անդրեաս Ղուկասյանի նկատմամբ. Առանցքային գործիչների կալանավորումից բխում է, որ Հայաստանի իշխանությունները, հնարավոր է՝ ազատազրկումն օգտագործում են որպես քաղաքական հալածանք: Հաղորդումներ կան, որ առաջնորդների, հասարակական գործիչների և այլ ցուցարարների լայնամասշտաբ ձերբակալությունների նպատակն էր վերջ դնել ցույցերին և լռեցնել ռեժիմի նկատմամբ հասարակական քննադատությունը: Հուլիսի 31-ին լուծարվեց հակաճգնաժամային Համակարգող խորհուրդը: Այս ոչ պաշտոնական մարմինը միավորում էր քաղաքական և քաղաքացիական գործիչներին, ովքեր ցույցերը համակարգելու պատասխանատվություն էին ստանձնել: Հուլիսի 31-ից ձերբակալվեցին խորհրդի անդամների մեծ մասը: Ալբերտ Բաղդասարյանը, որը Խորհրդի այն անդամներից էր, ում չէին ձերբակալել, հրապարակավ հայտարարեց, որ ձերբակալությունների պատճառով Խորհուրդն ի վիճակի չէ շարունակել իր գործունեությունը:[42]

41 «Նովայա գազետա». Երևանում ցույցերից հետո 100 մարդ է բերման ենթարկվել, *http://www.novayagazeta.ru/news/1705657.html*

42 *https://www.facebook.com/albert.baghdasaryan.7/posts/1106269236128871*

ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամների ձեռք բերած վկայությունները ցույց են տալիս, որ ցույցերի սկզբում իրավապահները բերման էին ենթարկում և հարցաքննում ցուցարարների ազգականներին, որպեսզի այդպիսով ճնշում գործադրեն ցույցերի առաջնորդների վրա: Օրինակ՝ ոստիկանության բաժին են կանչել Նորայր Ավետիսյանին, ում արցախյան պատերազմի վետերան հայրն ազատազրկված է: «Հիմնադիր խորհրդարան» շարժման մի շարք անդամների՝ Հասմիկ Էվոյանին, Ժաննա Ժամհարյանին, Գևորգ Մանուկյանին, Հովհաննես Ղազարյանին, նույնպես հարցաքննել են Հայաստանի տարբեր վայրերում՝ ակնհայտորեն փորձելով ճնշում գործադրել ցույցերի առաջնորդների վրա:

Երկրորդ քրեական գործը վերաբերում է ոստիկանության կողմից անհամաչափ ուժ կիրառելուն (ՀՀ քրեական օրեսգիրք, հոդված 308 1 և 309 2) և ապօրինի կերպով «լրագրողների մասնագիտական գործունեությունը խոչընդոտելուն» (ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 164): Հայաստանի Հատուկ քննչական ծառայությունը օգոստոսի 17-ին հայտարարեց, որ չորս անձ է ներգրավվել այս գործով:[43] Ո՛չ նրանց անունները, ոչ էլ մեղադրանքի այլ մանրամասներ չեն հաղորդվել:

Օգոստոսի 5-ին ոստիկանության մամուլի ծառայությունը հայտարարեց, որ հուլիսի 19-ի և 29-30-ի դեպքերի առթիվ կարգապահական տույժեր են կիրառվել մի շարք ոստիկանների նկատմամբ, ովքեր պատշաճ չեն կատարել իրենց պարտականությունները, հանրային միջոցառումների ժամանակ չեն ապահովել քաղաքացիների անվտանգությունը և չեն կանխել լրագրողների և այլ քաղաքացիների նկատմամբ ֆիզիկական բռնությունը: Ոստիկանության Երևան քաղաքի վարչության պետ Աշոտ Կարապետյանին, ՊՊԾ գնդի հրամանատար Խաչատուր Ավետիսյանին և նրա տեղակալներին հայտարարվել է խիստ նկատողություն, իսկ օգոստոսի 8-ին Աշոտ Կարապետյանին ազատել են զբաղեցրած պաշտոնից:[44] Ոստիկանության Նոր Նորքի, Էրեբունու և Սպիտակի բաժինների ղեկավարները ազատվել են պաշտոնից: Ըստ ոստիկանության հաղորդագրության, ծառայողական քննության նյութերն ուղարկվել են Հատուկ քննչական ծառայություն, որը պետք է որոշի քրեական գործ հարուցելու հարցը:[45]

Ողջունելի է ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման առնչությամբ հետաքննություն սկսելը: Սակայն, չորս կասկածյալի ներգրավումը, որոնց անձի և մեղադրանքի հիմքի մասին ոչ մի տեղեկություն չի հրապարակվել, ցույց է տալիս, որ իշխանությունները միտում չունեն խորն ու անկողմնակալ քննություն վարել՝ 2016-ի հուլիսի իրադարձությունների վերաբերյալ և դրանով պայքարել իրավախախտումների հարցում անպատժելիության դեմ: Այս հետաքննությունների առնչությամբ զարգացումներին պետք է ուշադիր հետևել:

Հայաստանը անպատժելիության դեմ պայքարի ծանրակշիռ պատմություն չունի: Օրինակ՝ Երևանում 2015-ի հուլիսյան (այսպես կոչված «Էլեկտրիկ Երևանի») ցույցերը բռնությամբ ցրելուց հետո ոչ մի ոստիկան չի կանգնել արդարադատության առաջ:[46] Չնայած պաշտոնական հետաքննությունը դեռ շարունակվում է, արձանագրված առաջընթացը ակնառու չէ:

Լրագրողների իրավունքները

Լրագրողների մեծ մասը փաստել են, որ մինչև հուլիսի 29-ը ոստիկանությունը չի միջամտել իրենց աշխատանքին, թեև ՔՀՊ-ի պատվիրակները այդպիսի միջամտության երկու դեպք են արձանագրել:

«Սիվիլնեթ»-ի (Civilnet.am) լրագրող Սարգիս Խարազյանին թիրախավորել են, երբ հուլիսի 17-ին լուսաբանում էր Ազատության հրապարակում ընթացող հանրահավաքը.

> «[Ոստիկանները] վերցրեցին կամերաս ու կոտրեցին: Բռնեցին խոսափողից ու կոտրեցին, կոտրեցին նաև ականջակալներս: Ինձ չխփեցին, ուղղակի ուզում էին սարքավորումը ջարդել: Ցույցը նոր էր սկսվում Ազատության հրապարակում, մի ոստիկան մոտեցավ Դավիթ Սանասարյանին, որը այդ պահին հարցազրույց էր մեզ տալիս, ու առանց որևէ բացատրության տարան դեպի իրենց մեքենան: Ես

43 ՀՔԾ, Եվս երկու անձ է ձերբակալվել Սարիթաղի գործով *http://www.ccc.am/ru/1428493746/3/5302*

44 «Ազատություն» ռ/կ, Աշոտ Կարապետյանն ազատվել է պաշտոնից *http://rus.azatutyun.am/a/27908813.html*

45 *http://rus.azatutyun.am/a/27902813.html*

46 ՄԳՄԻ, #ElectricYerevan: Խաղաղ ցույցի ցրումը Երևանում, հունիս 2015 *http://iphronline.org/armenia-electricyerevan-crackdown-on-peaceful-protest-20150714.html*

գնացի նրանց հետևից: Նրանք Դավիթին մտցրեցին մեքենան, էլի ոստիկաններ եկան ու հրեցին նրան: Տեսախցիկս երկար ոտնակի վրա էր, վերև էի պահում, որ լավ նկարեմ, ու ոտնակը կպավ մի ոստիկանի գլխին: Բոլորով շրջվեցին իմ կողմ ու սկսեցին չորս կողմից քաշել, բայց չխփեցին: Քաշեցին տեսախցիկի միկրոֆոնը ու լրիվ ջարդեցին»:

Հուլիսի 20-ին Հայկ Գրիգորյանը Սարիթաղում նկարահանում էր մի ցուցարարի նկատմամբ ոստիկանների բռնի գործողությունները: Հայկ Գրիգորյանը պատմել է ՔՀՊ փաստահավաք խմբին.

«Տեսա, որ ութ ոստիկան մի մարդ են ծեծում: Նա ընկել էր, իսկ նրանք բռունցքներով խփում էին: Ես մոտեցա, որ նկարեմ, երբ ինձ նկատեցին: Թողեցին այդ մարդուն ու հարձակվեցին ինձ վրա: Սկսեցին քացիներով ու բռունցքներով հարվածել մարմնիս տարբեր մասերին, այդ թվում՝ դեմքիս: Տեսախցիկս խլեցին, իսկ երբ հեռախոսս ընկավ գրպանիցս, դա էլ վերցրեցին: Հետո մի ոստիկան մոտեցավ, ասաց՝ հերիք է: Ինձ հարցրեց, թե ո՞ր լրատվամիջոցից եմ և ինչո՞ւ եմ էդտեղ նկարում: Կամերաս հետո վերադարձրեցին, բայց ամբողջ նկարածս ջնջել էին: Կողոսկրս կոտրվել էր, մարմինս կապտուկների մեջ էր: Հիվանդանոցում ինձ ոչ մի թուղթ չտվեցին, որ վկայեր մարմնական վնասվածքներիս մասին»:[47]

Ընդհանուր առմամբ, նման միջադեպերը հազվադեպ էին մինչև հուլիսի 29-ը: ՔՀՊ փաստահավաք խմբի հետ զրուցած լրագրողների մեծ մասն ասել է, որ երբ լրագրողական վկայականով (բեջերով) էին լինում, ոստիկանները չէին միջամտում իրենց աշխատանքին: Սակայն, լրագրողները նշել են, որ հուլիսի 29-ին ոստիկաններն, ըստ երևույթին, դիտավորյալ թիրախավորում էին լրագրողներին՝ խոչընդոտելով իրադարձությունների ուղիղ լուսաբանումը: Մի շարք լրագրողներ հաղորդեցին, որ նրանց ուժեղ ծեծի են ենթարկել և՛ ոստիկանները, և՛ քաղաքացիական հագուստով անհայտ անձինք, ովքեր գործում էին ըստ ոստիկանության հրահանգների:

«Լրագիր» (Lragir.am) ինտերնետային լրատվամիջոցի լրագրող Մարութ Վանյանը պատմում է.

«Նկարում էի, երբ քաղաքացիական հագուստով երկու մարդ մոտեցան ու հարցրեցին, թե ինչ եմ նկարում: Ասացին՝ մի՛ նկարի: Խլեցին կամերաս ու ջարդեցին, հետո ինձ ծեծեցին փայտե մահակներով: Ութ մարդ էր ինձ խփում, ընկա: Ամենաքիչը տասն անգամ խփել են: Ոստիկանները շարք կազմեցին, ես նրանց դիմաց էի, հետո քաղաքացիական հագուստով մի 8-10 մարդ ինձ քարշ տվեցին ոստիկանական շարքի հետևն ու շարունակեցին ծեծել»:[48]

«Ազատություն» ռադիակայանը հաղորդել է, որ հուլիսի 29-ին իրենց լրագրող Կառլեն Ասլանյանը, Հովհաննես Մովսիսյանը և Գարիկ Հարությունյանը Սարիթաղում հարձակման են ենթարկվել քաղաքացիական հագուստով անձնանց կողմից: Նրանց սարքերը կոտրել են, և «Ազատություն» ռադիոկայանը ստիպված է եղել դադարեցնել իրադարձությունների ուղիղ եթեր հեռարձակումը՝ դեպքի վայրից:[49]

ՔՀՊ փաստահավաք խմբի ներկայացուցիչները լսել են որոշ ականատեսներից, որ ոստիկանները հատուկ թիրախավորում էին լրագրողներին ու փչացնում նրանց նկարահանող սարքերը: «Ա1+» հեռուստաընկերության լրագրող Ռոբերտ Անանյանը պատմում է .

«Տպավորություն ունեի, որ լրագրողներին էին թիրախավորում, հատկապես նրանց, ովքեր տեսասարքեր ունեին: Համոզված եմ, որ ոստիկանությունն ուզում էր լրագրողներին հավաքել մի տեղ, որ հեշտ լիներ նրանց չեզոքացնելը: Առաջին հարվածային նռնակը, որ ոստիկանները կիրառեցին, լրագրողների վրա են նետել»:[50]

Այսպիսով, հայաստանյան իշխանությունները հուլիսի 29-ին ուժ են կիրառել լրագրողների դեմ՝ նրանց թույլ չտալու համար, որ նկարահանեն ցուցարարներին դաժանորեն ծեծող ոստիկաններին և քաղաքացիական հագուստով անձանց: Լրագրողներին թիրախավորելն, ըստ ամենայնի, հրահանգավորել է ոստիկանության հրամանատարությունը:

47 ՔՀՊ հարցազրույցը Հայկ Գրիգորյանի հետ, 2016 հուլիսի 29

48 ՔՀՊ հարցազրույցը Մարութ Վանյանի հետ, 2016 օգոստոսի 1

49 «Ազատություն» ռադիոկայան, «Սարիթաղում հարձակման են ենթարկվել «Ազատության» լրագրողները» *http://rus.azatutyun.am/a/27888963.html*

50 ՔՀՊ հարցազրույցը Ռոբերտ Անանյանի հետ, 2016 օգոստոսի 1

Հուլիսի 17-30-ի իրադարձությունների իրավական գնահատականը

Այս գլխում վերլուծվում են 2016-ի հուլիսի 17-30-ի իրադարձություններում տեղ գտած իրավախախտումները՝ Հայաստանի ազգային և միջազգային իրավական պարտավորությունների համատեքստում:

Հավաքների ազատություն և այլ հիմնարար իրավունքներ

Խաղաղ հավաքների ազատության իրավունքը պաշտպանված է ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև մարդու իրավունքների մասին միջազգային պայմանագրերով, որոնց միացել է Հայաստանը և որոնք կազմում են վերջինիս իրավական համակարգի բաղկացուցիչ մասը: ՀՀ Սահմանադրությունը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»: Ե՛վ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ, այսուհետ՝ Կոնվենցիա) 11-րդ հոդվածը, և՛ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (այսուհետ՝ Դաշնագիր) 21-րդ հոդվածը երաշխավորում են խաղաղ հավաքների ազատության իրավունքը: Այս իրավունքը պաշտպանվում է նաև ԵԱՀԿ մարդկային չափանիշներով սահմանված պարտավորություններով, մասնավորապես՝ 1990-ի Կոպենհագենյան փաստաթղթով: Հավաքների ազատության իրավունքի իրացումը Հայաստանում կարգավորվում է 2011թ. ընդունված՝ Հավաքների ազատության մասին օրենքով:[51] Օրենքը մանրամասն դրույթներ է պարունակում հավաքներ իրականացնելու տարբեր ասպեկտների մասին՝ հավաքը սահմանելով որպես «երկու կամ ավելի անձանց խաղաղ և առանց զենքի ժամանակավոր ներկայություն որևէ վայրում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ ընդհանուր կարծիք ձևավորելու կամ արտահայտելու մտադրությամբ»:

Հայաստանում 2016-ի հուլիսի 17-30-ի իրադարձությունները խաղաղ հավաքների իրավունքի տեսանկյունից գնահատելիս արժեքավոր ուղենիշեր է ներկայացնում ԵԱՀԿ Ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) և Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողովի) համատեղ հրատարակած «Ուղեցույցը՝ խաղաղ հավաքների ազատության մասին» (այսուհետև՝ Ուղեցույց):[52] Որպես կարևոր աղբյուր է ծառայում նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքը: Բացի խաղաղ հավաքների ազատության իրավունքից, ներկա վերլուծությանն առնչվող այլ հիմնարար իրավունքներն են, մասնավորապես՝ արտահայտման ազատությունը, ազատության և անվտանգության իրավունքը, խոշտանգումների և անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքը և արդարացի դատաքննության իրավունքը:

Այս իրավունքները պաշտպանվում են ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Կոնվենցիայով, Դաշնագրով և մարդու իրավունքներին վերաբերող այլ միջազգային պայմանագրերով և չափանիշներով, որոնց նկատմամբ պարտավորություններ է ստանձնել Հայաստանը:

Ցույցերի բնույթը արդյո՞ք հավաքները խաղաղ էին

Ազգային և միջազգային իրավունքը պաշտպանում է միայն այն ցույցերը, որոնք բնույթով խաղաղ են: Հետևաբար, առաջին բանը, որ պետք է որոշել, այն է, թե՝ արդյո՞ք այս զեկույցում լուսաբանվող ցույցերը խաղաղ էին:

Ինչպես սահմանվում է ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի «Ուղեցույցում՝ խաղաղ հավաքների ազատության մասին», հավաքը խաղաղ է համարվում, եթե դրա կազմակերպիչները խաղաղ մտադրություններ են դավանել և հավաքը վարել են առանց բռնի միջոցների: «Խաղաղ» տերմինով պետք է մեկնաբանվեն նաև այն ցույցերը, որոնք կարող են բարկացնել կամ վիրավորել, կամ նույնիսկ այն ցույցերը, որոնք ժամանակավորապես խանգարում են, խոչընդոտում են կամ խափանում են երրորդ կողմի գործունեությունը:[53]

51 Աղբյուր է հանդիսացել անգլերեն ոչ պաշտոնական թարգմանությունը *http://www.legislationline.org/documents/action/popup/id/16523*

52 Ուղեցույցը առկա է այստեղ՝ *http://www.osce.org/odihr/73405?download=true*

53 ԺՀՄԻԳ/Վենետիկի հանձնաժողով, «Ուղեցույց՝ խաղաղ հավաքների ազատության մասին», §1.3.

ՄԻԵԴԻ նախադեպային իրավունքը մատնանշում է, որ «խաղաղ հավաք» չեն համարվում միայն այն միջոցառումները, որոնց կազմակերպիչներն ու մասնակիցները բռնության դիմելու հակում են ցուցաբերել:[54] Հավաքը պետք է դիտվի որպես «խաղաղ», քանի դեռ չկա անհաղթահարելի և խոսուն ապացույց, որ կոնկրետ այդ միջոցառման կազմակերպիչները կամ մասնակիցները միտում ունեն վերահաս բռնության դիմել՝ կիրառել, քարոզել կամ հրահրել:[55] Պասիվ դիմադրության ձևեր որդեգրած հավաքները պետք է դիտվեն որպես խաղաղ: Փոքրաթիվ մասնակիցների կողմից բռնության գործադրման պատճառով տվյալ ցույցը, որ մնացած առումներով խաղաղ է, չպետք է ինքնաբերաբար դասակարգվի որպես «ոչ խաղաղ»[56] Նույնիսկ եթե առանձին անձինք առարկաներ են նետել ոստիկանների վրա, սա չպետք է հանգեցնի նրան, որ ամբողջ հավաքը դիտվի որպես «ոչ խաղաղ», իսկ որևէ միջամտություն պետք է ուղղված լինի այդ կոնկրետ անձանց, ոչ թե ամբողջ միջոցառումը ցրելուն:

ՔՀՊ փաստահավաք առաքելության ուսումնասիրությունները հաստատում են, որ Երևանում հուլիսին տեղի ունեցող ցույցերը գերազանցապես խաղաղ բնույթ ունեին: Փաստահավաք խմբի անդամները դիտարկել են ցույցերի առաջնորդների ջանքերը՝ հանրությանը զերծ պահելու որևէ բռնի գործողությունից: Ցուցարարները հիմնականում հավաքվել են կենտրոնական Երևանում՝ Ազատության հրապարակում, և հետո երթով անցել քաղաքի միջով՝ ծափերով ու վանկարկումներով աջակցելով «Սասնա ծռերին» և կոչ անելով, որ Սերժ Սարգսյանը հրաժարական տա նախագահի պաշտոնից: Խոշոր միջադեպեր պատահել են, երբ ոստիկանները փորձել են ցուցարարներին թույլ չտալ քայլել որոշակի փողոցներով: Ոստիկանության հիմնավորումն այն էր, որ ցուցարարները իշխանություններին նախօրոք չեն ծանուցել նախատեսված երթի ուղին, թեև մեծմասամբ նման կոնֆլիկտները լուծվում էին բանակցությունների միջոցով:

Հուլիսի 20-ի և 29-ի ցույցերի վրա ստվեր գցեցին բռնության դեպքերը: Հուլիսի 20-ին մի շարք ցուցարարներ ագրեսիվ վարք դրսևորեցին՝ փորձելով շարքով կանգնած ոստիկանների վրայից քաշել-հանել սաղավարտներն ու վահանները և քարեր շպրտելով նրանց վրա: Սակայն, ոստիկանության արձագանքը համարժեք չէր, քանի որ կիրառված լուսաձայնային նռնակները մարմնական վնասվածքներ են պատճառել զգալի թվով խաղաղ ցուցարարների: Բացի այդ, ոստիկանները հետապնդում էին ցուցարարներին՝ նրանց թույլ չտալով նահանջել՝ ծեծելով նրանցից շատերին: Հուլիսի 29-ին երթը Սարիթաղ խաղաղ էր՝ առանց ցուցարարների կողմից բռնության որևէ նշանի: Ոստիկանությունը անհամաչափ ուժ է գործադրել՝ ցուցարարներին ցրելիս:

Իրազեկման Հարցը

ԺՀՄԻԳ/Վենետիկի հանձնաժողովի «Ուղեցույցը՝ խաղաղ հավաքների ազատության մասին» շեշտում է, որ հավաք անցկացնելու համար նախօրոք իրազեկման պահանջը անհրաժեշտ չէ՝ միջազգային իրավունքի տեսանկյունից:[57] Կանխավ իրազեկում պետք է պահանջվի միայն այն դեպքում, երբ դրա նպատակն է պետությանը հնարավորություն տալ՝ ձեռք առնել համապատասխան միջոցառումներ՝ նպաստելու համար հավաքի ազատությանը և պաշտպանելու համար հասարակական կարգը, անվտանգությունը և մյուսների իրավունքներն ու ազատությունները: Իշխանությունները միշտ պետք է պաշտպանեն և նպաստեն ինքնաբուխ հավաքներին, եթե դրանք բնույթով խաղաղ են:[58]

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքը պահանջում է, որ 100 հոգուց ավելի մասնակից ունեցող հավաքների կազմակերպիչները նախօրոք իրազեկեն իշխանություններին՝ ոչ ուշ, քան նախատեսված հավաքից մեկ շաբաթ առաջ:[59] Օրենքը նախատեսում է նաև ինքնաբուխ և շտապ հավաքների կարգը, երբ իրազեկման ժամկետները հնարավոր չէ ապահովել, իսկ նպատակն է անմիջապես և հրատապ կերպով արձագանքել տեղի ունեցող իրադարձություններին: Այն սահմանում է, որ եթե ինքնաբուխ հավաքն ունի «փաստացի կազմակերպիչ», կազմակերպիչը պետք է հավաքի մասին «անհապաղ տեղեկացնի ոստիկանությանը», և նման ցույցերը «չեն կարող տևել վեց ժամից ավելի»:[60]

54 Սիսեն ընդդեմ Ֆրանսիայի (2002), §37
55 Քրիստոնյա-դեմոկրատական ժողովրդական կուսակցությունն ընդդեմ Մոլդովայի (No.2) (2010),§23
56 ԺՀՄԻԳ/Վենետիկի հանձնաժողով, «Ուղեցույց՝ խաղաղ հավաքների ազատության մասին», §165
57 ԺՀՄԻԳ/Վենետիկի հանձնաժողով, «Ուղեցույց՝ խաղաղ հավաքների ազատության մասին», § 4.1.
58 ԺՀՄԻԳ/Վենետիկի հանձնաժողով, «Ուղեցույց՝ խաղաղ հավաքների ազատության մասին», § 4.2.
59 Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքը, հ. հ. 9 և 12
60 Հոդվածներ 26 և 27

Երևան քաղաքի ավագանու հայտարարության համաձայն, Խորենացի փողոցում հուլիսի 17-ին և հետագայում հանրային հավաք անելու մասին իրազեկում իշխանությունները չեն ստացել: Ցուցարարները չեն տեղեկացրել նաև իրենց երթերի ուղիների մասին: Ոստիկանությունը զգայուն էր Խորենացի փողոցում ընթացող ցույցերի նկատմամբ, քանի որ դա տեղի էր ունենում ՊՊԾ գնդի անմիջական հարևանությամբ: Այնուամենայնիվ, Երևանի քաղաքապետարանը պաշտոնապես արգելեց հանրային որևէ հավաք անցկացնել տարածքում միայն հուլիսի 30-ին:[61] ՔՀՊ առաքելության պատվիրակները դիտարկել են ոստիկանների և ցուցարարների միջև բանակցությունները՝ երևանյան երթերի ընթացքում: Հստակ էր, որ երթերի երթուղին ինքնաբուխ կերպով էր որոշվում և տեղում բանակցվում ոստիկանության հետ: Այնուհանդերձ, ցուցարարները խաղաղ վարք են դրսևորել և բացի հուլիսի 20-ին Խորենացի փողոցում տեղ գտած միջադեպից, կոնֆլիկտ հրահրող որևէ քայլ չեն ձեռնարկել:.

Հավաքն արգելելու Համար վկայակոչվող Հիմքերրի

Հավաքների ազատությունը կարող է սահմանափակվել միայն այն հիմքերով, որոնք ուղղակիորեն սահմանված են օրենքով: Համապատասխան միջազգային պայմանագրերը ներկայացնում են այն հիմքերի սպառիչ ցանկը, որոնց հղում անելով՝ պետությունը կարող է սահմանափակել խաղաղ հավաքների ազատությունը: Այդ ցանկում են՝ ազգային անվտանգության շահերը, հասարակական անվտանգությունը, անկարգության կամ հանցագործության կանխումը, առողջության և բարոյականության պաշտպանությունն ու ուրիշների իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:[62]

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքն ամփոփում է այս բոլոր հիմքերը: Ի լրումն, այն նաև սահմանում է, որ հավաքների ազատությունը կարող է նաև սահմանափակվել, եթե նպատակ կա հավաքն օգտագործել «սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու» համար:[63]

ՀՀ ոստիկանությունը հուլիսի 18-ին հայտարարություն է տարածել՝ հանրությանը տեղեկացնելով, որ մարդկանց և տրանսպորտի տեղաշարժը Խորենացի փողոցում սահմանափակված կլինի՝ հակաահաբեկչական գործողությունների պատճառով:[64] Հուլիսի 26-ին ՀՀ ոստիկանությունը հանդես է եկել հրապարակային հորդորով, որ հանրային հավաքները չիրականացվեն Խորենացի փողոցում գրավված ոստիկանական զորամասի մերձակայքում՝ հանուն հասարակական անվտանգության:[65] Ընդհուպ մինչև հուլիսի 30-ը Երևանի քաղաքապետարանը չի արգելել հանրային հավաքները Խորենացի փողոցում:

Քանի որ Պարեկապահակային ծառայության գունդը գտնվում էր զինված մարդկանց ձեռքում, հստակ է, որ ոստիկանությունը հիմքեր ուներ՝ Խորենացի փողոցում հավաքները սահմանափակելու համար: Սակայն, որևէ հիմք առկա չէր՝ ուժի գործադրմամբ ցույցը ցրելու և ցուցարարներին դաժանորեն ծեծելու համար: Ավելին, ոչ մի տեղեկություն չի վկայել Սարիթաղում հավաքներ անելու արգելքի մասին, որտեղ ոստիկանությունը դաժանորեն ճնշել է ցույցը:

Իշխանության գործողությունների Համաչափության Հարցը

ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի «Ուղեցույցը՝ խաղաղ հավաքների ազատության մասին» հաստատում է, որ ըստ միջազգային իրավունքի, պետությունները պոզիտիվ պարտավորություն ունեն՝ հասանելի և պատշաճ միջոցառումներ ձեռնարկել, որպեսզի խաղաղ հավաքները կայանան առանց վախի, թե մասնակիցների նկատմամբ կարող է ֆիզիկական բռնություն կիրառվել: Եթե հավաքի ընթացքում դիմակայություն կամ վեճ է առաջանում, ընդունելի լուծման հասնելու համար պետք է դիմել բանակցությունների կամ միջնորդավորված երկխոսության:[66]

61 «Ազատություն» ռ/կ, «Արգելվել են հանրային միջոցառումները Էրեբունիում *http://rus.azatutyun.am/a/27890241.html*

62 Տես Դաշնագրի հոդված 21 եւ Կոնվենցիայի հոդված 11

63 Հավաքների ազատության մասին ՀՀ օրենքը, հոդված 5

64 «Ազատություն» ռ/կ, «Ոստիկանություն. ընթանում է հակաահաբեկչական գործողություն» *http://rus.azatutyun.am/a/27866479.html*

65 «Ազատություն» ռ/կ, «Ոստիկանությունը պահանջում է ցույցերը տեղափոխել այլ վայր *http://rus.azatutyun.am/a/27881246.html*

66 ԵԱՀԿ «Ուղեցույց՝ խաղաղ հավաքների ազատության մասին», § 5.3.

ՄԱԿ-ի «Հիմնական սկզբունքներում՝ իրավապահների կողմից ուժի և հրազենի կիրառման մասին» (այսուհետ՝ Սկզբունքներ) նշվում է. «Իրավապահները ծառայողական պարտականություններ կատարելիս պետք է հնարավորինս խաղաղ միջոցների դիմեն՝ նախքան ուժի և հրազենի գործադրման անցնելը: Նրանց կարելի է ուժ և հրազեն կիրառել միայն այն դեպքում, եթե այլ միջոցներն անարդյունավետ են կամ անհուսալի՝ նախատեսված արդյունքին հասնելու համար: Ուժ գործադրելիս իրավապահները պետք է դրսևորեն զսպվածություն և գործեն օրինախախտման լրջությանը և դրված օրինական նպատակին համաչափ: Իրավապահ պաշտոնատար անձինք պետք է ձգտեն նվազագույնի հասցնել վնասն ու մարմնական վնասվածքները»:[67]

Սկզբունքներում ասվում է. «Կառավարությունները պետք է ապահովեն, որ իրավապահների կողմից ուժի և հրազենի կամայական կիրառումը կամ չարաշահումը օրինական կարգով պատժվի որպես հանցագործություն»: Ըստ միջազգային իրավունքի, ցանկացած ժամանակ արգելվում են խոշտանգումը և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը և դրանք պետք է հետաքննվեն, ու մեղավորները պատժվեն:[68] ՀՀ հավաքների ազատության մասին օրենքի 33-րդ հոդվածը սահմանում է, որ «ոստիկանությունը կարող է դադարեցնել հավաքը միայն այն դեպքում, եթե այլ կերպ հնարավոր չէ կանխել այլ անձանց սահմանադրական իրավունքների կամ հանրության շահերի անհամաչափ սահմանափակումը»:

Օրենքի 33-րդ հոդվածը նաև նախատեսում է, որ հավաքը դադարեցնելու պահանջը ոստիկանությունը պետք է ներկայացնի հավաքի ղեկավարին, որը պարտավոր է այդ մասին անմիջապես տեղյակ պահել հավաքի մասնակիցներին: Եթե հավաքը ղեկավար չունի կամ առկա ղեկավարը չի կատարում պահանջը, ոստիկանության ներկայացուցիչը բարձրախոսով առնվազն երկու անգամ հանդես է գալիս հայտարարությամբ, որոնցով պահանջում է, որ մասնակիցները դադարեցնեն հավաքը, և ողջամիտ ժամկետ է տալիս դրա համար:

Հավաքների ազատության մասին օրենքի 34-րդ հոդվածի համաձայն, ոստիկանությունը կարող է ցրել հավաքը, եթե այն կամովին չի ցրվում տրված ժամկետում: Ոստիկանության մասին ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն, ոստիկանները պարտավոր են նախազգուշացնել՝ նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների կամ հրազենի գործադրմանն անցնելը, այդպիսով բավարար ժամանակ տալով՝ օրինական պահանջները կատարելու և վիճարկվող գործողությունը դադարեցնելու համար: Միակ բացառություններն այն դեպքերում են, երբ ուժի կամ հրազենի գործադրման ուշացումը ուղիղ սպառնալիք է քաղաքացիների կամ ոստիկանի կյանքին և առողջությանը կամ այլ լուրջ հետևանքների կարող է բերել կամ էլ, երբ նախազգուշացում անելն անհնար է:

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանի իշխանությունները չպետք է ցրեին հուլիսի 29-ի ցույցը, քանի որ այն խաղաղ բնույթ է ունեցել և որևէ ակնհայտ սպառնալիք չի ներկայացրել հասարակական անվտանգությանը կամ ուրիշների իրավունքներին և ազատություններին: Այնուամենայնիվ, երբ ոստիկանները որոշել են ուժի դիմել, պարտավոր էին խստորեն ապահովել կիրառվող ուժի համաչափությունը՝ ենթադրվող վտանգին, որ կարող էր պարունակել ցույցը:Եթե նույնիսկ ցույցն անօրինական է համարվել ըստ ազգային օրենսդրության, դա չի արդարացնում բազմությունը ցրելու համար չափազանց մեծ ուժի կիրառումը[69] Սարիթաղում ցուցարարներ որոնելիս տեղի բնակիչների սեփական տներ գրոհելը համաչափության սկզբունքից դուրս է միանշանակ:

Ե՛վ հուլիսի 20-ին, և՛ հուլիսի 29-ին, ոստիկանության ներկայացուցիչները նախազգուշացրել են ցուցարարներին, որ ցույցը ցրելու նպատակով ուժ է կիրառվելու: Սակայն, հուլիսի 29-ին Խորենացի փողոցում ոստիկանությունը հատուկ միջոցներ է գործի դրել նախազգուշացումից անմիջապես հետո՝ ցուցարարներին բավարար ժամանակ չտալով, որ հեռանան: Նույն օրը Սարիթաղում ոստիկանությունը հանդես չի եկել որևէ նախազգուշացմամբ: Տուժողներն ու ականատեսները պատմել են ՔՀՊ փաստահավաք խմբին, որ ոստիկանական բռնությունը դրսևորվում էր բռունցքներով ու ոտքերով, վահաններով ու մահակներով ծեծելով:

67 «Ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներ», սկզբունքներ 4 և 5

68 Դաշնագրի հոդված 7, Կոնվենցիայի հոդված 3, ՄԱԿ-ի կոնվենցիա՝ խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի դեմ

69 Սիսեն ընդդեմ Ֆրանսիայի (2002), § 50

Արդարացվա՞ծ էր ցուցարաներին բերման ենթարկելը

Դժվար է գնահատել բերման ենթարկվածների ճշգրիտ թիվը: Ոստիկանությունը հրապարակավ հայտարարել է, որ հուլիսի 20-ին բերման է ենթարկվել 136 ցուցարար[70], հուլիսի 26-ին՝ 64 ցուցարար[71] իսկ հուլիսի 30-ին՝165:[72] Սակայն «Իրազեկ քաղաքացիների միավորում» կազմակերպության հարցմանն ի պատասխան՝ ոստիկանությունը այլ թվեր է ներկայացրել: Ըստ այդ փաստաթղթերի, 11 ցուցարարի բերման են ենթարկել հուլիսի 17-ին, 25 ցուցարարի՝ հուլիսի 18-ին, 129 հոգու՝ հուլիսի 20-ին, 18 հոգու՝ հուլիսի 21-ին, 82 հոգու՝ հուլիսի 26-ին, 151 հոգու՝ հուլիսի 27-ին, և 207 հոգու՝ հուլիսի 29-ին (ընդամենը 726 ցուցարար):[73] Նրանցից շատերին բաց են թողել 24 ժամվա ընթացքում: Տուժածներից և ականատեսներից ստացած տեղեկություններից դատելով՝ ՔՀՊ փաստահավաք խմբի անդամները եզրակացնում են, որ որոշ մարդիկ բերման են ենթարկվել մի քանի անգամ և հնարավոր է՝ վիճակագրական տվյալներում հայտնվել են մի քանի անգամ: Բացի այդ, ակնհայտ է, որ բազմաթիվ դեպքերում բերման ենթարկելը պաշտոնապես չի արձանագրվել:

Հայաստանի քրեական դատավարության օրենսգրքի[74] համաձայն, ձերբակալել կարող են միայն այն անձանց, ովքեր կասկածվում են այնպիսի հանցագործության կատարման մեջ, որի համար պատիժ կարող է սահմանվել ազատազրկումը, և նրանց, ովքեր մեղադրյալի կարգավիճակում խախտել են խափանման միջոցի պայմանները (հոդված 128): Ինչ վերաբերում է վկաներին, դատավարության օրենսգիրքը նախատեսում է, որ քննչական մարմինը կարող է նրանց հրավիրել հարցաքննության կա՛մ հարցաքննել նախաքննության կատարման վայրում, կա՛մ անհրաժեշտության դեպքում՝ «իր գտնվելու վայրում» (հ.հ. 205 և 206): Հարցաքննությունից առաջ քննիչը պարտավոր է վկային տեղեկացնել, թե ինչ գործով են նրան հարցաքննում (ՀՀ քրդատօր, հ. 206): Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսգրքի համաձայն, քաղաքացիներին կարող են վարչական կալանքի տակ պահել մինչև երեք ժամ՝ «բացառիկ դեպքերում»՝ օրենսդրական ակտերով կարող են սահմանվել վարչական ձերբակալման այլ ժամկետներ (հոդված 262): Վկան իրավապահ մարմին կարող է հրավիրվել բացառապես ցուցմունք տալու նպատակով: Վկաներին այդ նպատակի համար պահանջվող ժամանակից ավելի երկար պահելը պետք է համարվի ապօրինի: Հայաստանյան իշխանությունները ձգտել են արդարացնել «վկաների» երկարաձգված անազատությունը՝ պնդելով, թե տեղական ոստիկանական բաժիններում որակյալ մասնագետների պակաս կար, որպեսզի գրանցեին ցուցմունքները: Հնարավոր էր խուսափել տասնյակ քաղաքացիների երկարաձգված և անհիմն անազատությունից, եթե ձեռք բերեին բերման ենթարկվածների հասցեներն ու նրանց հարցաքննության հրավիրեին հետագայում:

Ինչպես արդեն նշվել է որպես «վկա», բերման ենթարկվածներին երբեմն վերաբերվել են որպես կասկածյալների, իսկ շատերը հաղորդել են, որ իրենց համար հասկանալի չի եղել իրենց կարգավիճակը անազատության մեջ: Բերման ենթարկելու իրավաչափությունը կարելի է պատշաճ կերպով գնահատել՝ միայն ուշադրությամբ զննելով յուրաքանչյուր առանձին դեպք: Այնուամենայնիվ, սույն զեկույցում ներկայացված տեղեկատվությունը քննության համար էական հարցեր է բարձրացնում, որոնք վերաբերում են անձանց բերման ենթարկելուն, և ենթադրվում է, որ շատ ցուցարարների բերման են ենթարկել կամայականորեն:

Արդյո՞ք ցուցարարներին տեղեկացրել են իրենց բերման ենթարկելու հիմքերի մասին

Շատերը, ովքեր զրուցել են ՔՀՊ փաստահավաք խմբի հետ, հաղորդել են, որ բերման ենթարկելիս ոստիկանները տեղյակ չեն պահել պատճառների մասին: Նույնիսկ նրանք, ովքեր պնդել են, որ ոստիկաններն իրենց ներկայացնեն բերման ենթարկելու պատճառները, չեն կարողացել որևէ բացատրություն ստանալ:

Ազատությունից զրկվելու պատճառների մասին տեղեկանալու իրավունքը երաշխավորված է Սահմանադրությամբ, որն ամրագրում է, որ «ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի

70 «Ազատություն» ռ/կ, 136 անձ է բերման ենթարկվել հուլիսյան դեպքերից հետ *http://rus.azatutyun.am/a/27872017.html*

71 «Ազատություն» ռ/կ, Գիշերը 64 ցուցարար է բերման ենթարկվել *http://rus.azatutyun.am/a/27883952.html*

72 «Ազատություն» ռ/կ, Երեկ Երևանում 165 անձ բերման է ենթարկվել *http://rus.azatutyun.am/a/27889679.html*

73 Փաստաթղթեր # 2,3,4,5,6,7,8

74 ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, *http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1450&lang=rus*

լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին»:

Քրեական դատավարության օրենսգրքի հոդված 11(4)-ը սահմանում է, որ ազատազրկված անձին «անհապաղ հաղորդում են ձերբակալության կամ կալանավորման հիմքերը»: Կարող է վիճարկվել այն, որ ազատազրկվածին իր իրավունքների մասին տեղեկացնելը մի փոքր ուշացնելը կարող է արդարացված լինել: Օրինակ, ՄԻԵԴ-ը համարել է, որ վեցից ութ ժամվա ընթացքում տրված իրազեկումները համապատասխանել են անհետաձգելիության («անհապաղ» իրազեկման) պահանջներին[75] Այսքանով հանդերձ, ազատազրկման պատճառների մասին տեղեկացվելու իրավունքը հստակորեն պարբերաբար խախտվել է 2016-ի հուլիսի 17-30-ի ընթացքում՝ անձանց բերման ենթարկելիս:

Արդյո՞ք բերման ենթարկված ՑուՑարարներն անարգել օգտվել են փաստաբանի ծառայությունից

Հայաստանի Սահմանադրությունն ամրագրում է, որ բերման ենթարկելու պահից յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնության իրավունք: Օրենքով սահմանված դեպքերում իրավական օգնությունը տրամադրվում է անվճար: Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի դրույթների համաձայն և ինչպես ընդգծում են միջազգային իրավապաշտպան մարմինները, իրավաբանական օգնության մատչելիության սկզբունքը առանցքային է իրավական երաշխիքների և արդար դատաքննության իրավունքում: Բազմաթիվ առիթներով ՄԻԵԴ-ը նշել է, որ իրավաբանական ներկայացուցչի հետ հաղորդակցման իրավունքը Կոնվենցիայի նվազագույն պարտադիր պահանջ է:[76]

Սա ներառում է նաև իրավաբանի աջակցություն՝ ոստիկանության հարցաքննության նախնական փուլում,[77] քանի դեռ չկան նման աջակցությունն ապահովելու անհաղթահարելի պատճառներ:[78] ՔՀՊ-ի փաստահավաք խմբի անդամներն արձանագրել են մի շարք դեպքեր, որոնք մտահոգիչ են՝ անհապաղ իրավաբանական խորհրդատվություն ստանալու իրավունքի խախտման առումով: Որոշ բերման ենթարկվածներ և նրանց պաշտպանները պատմել են ՔՀՊ-ի պատվիրակությանը, որ ոստիկանությունը չի նպաստել իրավաբանական օգնության անհապաղ ապահովմանը, իսկ որոշ դեպքերում՝ ակտիվորեն խանգարել է:

75 Տես՝ Օ'Հարան ընդդեմ Միացյալ Թագավորության
76 Տես օրինակ՝ Օջալանն ընդդեմ Թուրքիայի (2005)
77 Սալդուզն ընդդեմ Թուրքիայի (2008)
78 Բրենանն ընդդեմ Միացյալ Թագավորության (2002), Պիշչալնիկովն ընդդեմ Ռուսաստանի Դաշնության (2009)

Առաջարկություններ

Սույն զեկույցում զետեղված փաստերի հիման վրա առաջարկում ենք Հայաստանի իշխանություններին անհապաղ և առարկայական քայլեր ձեռնարկել՝ 2016-ի հուլիսի 17-30-ի իրադարձությունների ընթացքում փաստագրված իրավախախտումների առնչությամբ պատասխանատվությունն ու արդարադատությունն ապահովելու համար:

Հայաստանի իշխանությունները պետք է.

- Ձեռնարկեն անհապաղ, խորը և անկողմնակալ հետաքննություն՝ Երևանում 2016-ի հուլիսի 20-ին և 29-ին ցույցերը ցրող իրավապահների անօրինական գործողությունների մասին հաղորդումների վերաբերյալ:
- Հետաքննեն հետևյալ բոլոր հաղորդումները՝ ապահովելով հաղորդված բռնությունների հետ կապված յուրաքանչյուր առանձին դեպքի, այդ թվում՝ սույն զեկույցում փաստագրված հանգամանքների մանրազնին հետազոտություն.
    - Հաղորդումներ այն մասին, որ հուլիսի 29-ի խաղաղ ցույցը ցրել են՝ չափազանց մեծ ուժ կիրառելով, չնայած այն ոչ մի հստակ վտանգ չէր ներկայացնում հասարակական կարգին կամ անվտանգությանը, կամ ուրիշների իրավունքներին և ազատություններին:
    - Հաղորդումներն այն մասին, որ ցույցերը ցրող իրավապահները չեն ապահովել, որ կիրառվող ուժը խստիվ համաչափ լինի, իսկ վնասը և մարմնական վնասվածքները նվազագույն լինեն:
    - Հաղորդումներն այն մասին, որ ցուցարարներին և լրագրողներին ոստիկանները հետապնդել են, խփել, ոտքով հարվածել, ծեծել և ենթարկել այլ վատ վերաբերմունքի:
    - Հաղորդումներն այն մասին, որ առանց տարբերակիչ նշանների քաղաքացիական հագուստով ոստիկաններն ակտիվորեն մասնակցել են ցուցարարներին բերման ենթարկելու ու նրանց նկատմամբ վատ վերաբերմունքին:
    - Հաղորդումներն այն մասին, որ ոստիկանությունը առգրավել է, վնասել կամ փչացրել ցույցերը լուսաբանող լրագրողների սարքավորումը և խոչընդոտել նրանց աշխատանքը:
    - Հաղորդումները՝ ցուցարարներին կամայական և ապօրինի ազատազրկելու մասին:
    - Հաղորդումներն այն մասին, որ անձանց բերման ենթարկող ոստիկանները չեն ներկայացել և չեն ապահովել ազատազրկվածների իրավաբանական օգնության իրավունքի իրացմումը, չեն տեղեկացրել բերման ենթարկելու պատճառների մասին, նրանց՝ որպես բերման ենթարկվածի իրավունքների և կարգավիճակի մասին, չեն ապահովել անհապաղ իրավաբանական աջակցությունը բոլորին և բերման ենթարկվածների կողմից կապի հաստատումը ընտանիքների հետ:
    - Հաղորդումներն այն մասին, որ բերման ենթարկվածներին անվայել վերաբերմունքի են արժանացրել, ինչպես օրինակ՝ ժամերով ուտելու ոչինչ չեն տվել, պատշաճ բուժօգնություն չեն տրամադրել, ձգձգել են փաստաբանի հետ հանդիպումը, արգելել են օգտվել հեռախոսից և ահաբեկել են ազատազրկվածներին:
    - Հաղորդումներն այն մասին, որ ցույցերը ցրելու և ցուցարարներին բերման ենթարկելու ընթացքում վիրավորված անձանց համար չի ապահովվել անհապաղ բուժօգնության մատչելիությունը:
- Ապահովեն, որ 2016-ի հուլիսի 20-ին և 29-ին տեղի ունեցած իրավախախտումների մեջ կասկածվող պաշտոնատար անձինք, այդ թվում՝ հրամանատարական և վերահսկողական լիազորություններ ունեցողները, կանգնեն արդար դատաքննության առաջ: Սահմանված բոլոր պատիժները պետք է համաչափ լինեն՝ կատարած խախտումների ծանրությանը:
- Ապահովեն հուլիսի 20-ի և 29-ի իրադարձությունների ժամանակ իրավախախտումներից տուժածների արդար և պատշաճ փոխհատուցումը:
- Ապահովեն, որ այսուհետ Հայաստանում ազատությունից զրկված բոլոր անձինք տեղեկացվեն իրենց իրավունքների մասին բերման ենթարկվելու պահից, անհապաղ ապահովվեն իրավական և բժշկական օգնությամբ, կարողանան իրենց ընտրած անձին տեղյակ պահել իրենց մասին և անհապաղ ներկայացվեն դատարան, ինչպես որ կոչ են անում միջազգային իրավապաշտպան կառույցները:
- Հանրային հավաքների կազմակերպման և հասարակական կարգի պահպանման մասին ազգային օրենսդրությունը ամբողջությամբ համապատասխանեցնեն մարդու իրավունքների միջազգային

չափանիշներին: Մասնավորապես՝ իշխանությունները պետք է ապահովեն, որ խաղաղ հավաքները տեղի ունենան առանց միջամտության, որ ցույցեր ցրելու ցանկացած գործողություն իրականացվի միայն որպես ծայրահեղ միջոց բացառապես այն հիմքերով, որ ամրագրված են միջազգային իրավունքում, և որ ցույցի ցրման համար գործի դրված միջոցները խիստ անհրաժեշտ և համաչափ լինեն տվյալ իրադրությունում:

- Իրավապահների համար պատշաճ դասընթացներ կազմակերպեն՝ հավաքներում հասարակական կարգի պահպանման և բերման ենթարկվածների նկատմամբ վերաբերմունքի վերաբերյալ՝ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին համապատասխան, և վերանայեն իրավապահների հրահանգավորումը, ընթացակարգերը և թերացած կառույցները՝ բռնությունները արդյունավետ կերպով կանխելու համար:

IPHR International Partnership for Human Rights

Square de l'Aviation 7A 1070 Brussels, Belgium

T +32 (0) 2 880 03 99
E IPHR@IPHRonline.org
w IPHRonline.org

/twitter.com/IPHRonline
/facebook.com/IPHR